Կրթության որակի բարելավման նպատակով հետևողական աշխատանքներ շարունակվեցին պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման, նրանց աշխատածավալների օպտիմալացման ուղղությամբ: Իրականացվել է դասախոսների ծանրաբեռնվածության բաշխման գործընթացը և կատարման վերահսկումը:

Իրականացվել են դասալսումներ տարբեր ֆակուլտետներում, որի արդյունքները արձանագրվել և քննարկվել են համապատասխան ամբիոններում, Կազմակերպվել են հանդիպումներ ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի հետ, որտեղ քննարկվել են դասախոսությունների և գործնական պարապմունքների որակի բարձրացման, ընթացիկ քննությունների անցկացման և տեղեկագրերի լրացման վերաբերյալ հարցեր:

Հաշվետու ժամանակահատվածում ակտիվորեն շարունակվել է կապը ՀՀ և ՌԴ առաջատար բուհերի հետ՝ հրավիրվել են դասախոսներ որոշ դասընթացների և օնլայն ռեժիմով դասախոսությունների անցկացման համար:

Կազմվել և հաստատվել են ժամանակացույցեր 2014-15 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության համար: Քննարկվել և ամփոփվել են 2014-15 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները:

Հաշվետվություն

ԱրՊՀ գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վալերի Միքայելի Ավանեսյան

Արցախի պետական համալսարանը 01.09.2015թ. դրությամբ համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի Հայաստանի հանրապետության հետ՝ 16, Ռուսաստանի դաշնության բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ՝ 5, Եվրոպական բուհերի հետ՝ 3, և մեկ համագործակցություն նախապատրաստական փուլում է ԱՄՆ Ֆրեզնոյի պետական համալսարանի հետ: Առկա պայմանագրերի շրջանակներում այս ուսումնական տարվա ընթացքում տեղի են ունեցել պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխադարձ այցելություններ:

Ինչպես և նախորդ տարիներին, այնպես էլ 2014-2015 ուսումնական տարում ևս Արցախի պետական համալսարանը կազմակերպել է տարբեր գիտական միջոցառումներ, սեմինարներ, կրթական ծրագրեր, ցուցահանդեսներ: Ստորև ներկայացված է դրանցից հիշարժանները

1. 2014թ. հոկտեմբեր - Գիտական ընթերցումներ՝ Ռուսաստանի դաշնության Տոմսկի պետական համալսարանի ասպիրանտների ու մագիստրանտների մասնակցությամբ:

2. 2014թ. նոյեմբեր - Միջբուհական գիտաժողովի կազմակերպումն ու անցկացումը՝ նվիրված Արցախի պետական համալսարանի 45-ամյակին և նյութերի ժողովածուի պատրաստումը տպագրելու նպատակով:

3. 2014թ. - ԱրՊՀ <<Գիտական տեղեկագրի>>. հերթական համարի պատրաստումը և տպագրումը /բնագիտական և հումանիտար պրակներ/

4. 2015թ. փետրվարի 25 - ին - Գիտական ընթերցումներ՝ նվիրված Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակին՝ բուհի դասախոսների, ասպիրանտների, մագիստրանտների և ուսանողների մասնակցությամբ:

5. 2014թ. ապրիլի 10-12 - Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցին նվիրված միջազգային գիտաժողովի անցկացումը և նյութերի նախապատրաստումը տպագրելու համար /Հայագիտական ուսումնասիրություններ/:

6. 2014թ. սեպտեմբեր 27-28 և նոյեմբեր 21-23 - Գիտական ընթերցումների կազմակերպում Եվրոպական ինտեգրացիայի ասոցիացիայի ղեկավար Լարեն Բեքարյանի մասնակցությամբ:

7. 2015 թ. ապրիլի 8 – ին - Ներբուհական ուսանողական <<Հայոց ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն>> խորագրով գիտաժողովի կազմակերպում:

8. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված գիտական ընթերցումների կազմակերպում բուհի գրադարանում և ֆակուլտետներում՝ դասախոսների մասնակցությամբ:

9. 2015թ. մարտին - ԱրՊՀ ասպիրանտների և մագիստրանտների մասնակցության ապահովումը Գյումրիի միջբուհական գիտաժողովին՝

10. 2015թ. մարտին - Ուսանողական գիտական ընկերության շրջանակներում կլոր սեղանի կազմակերպումը՝ <<Միջքաղաքակրթությունների բախումը Փարիզի <<Շառլի Էբդո>> խմբագրությունում>> թեմայի շուրջ:

11. 2015 թ. մայիսի 5 – 7 - ԱրՊՀ դասախոսների, մագիստրանտների և ուսանողների մասնակցությունը Եռատոնին նվիրված գիտական ընթերցումներին:

12. ԼՂՀ դպրոցներում և զինվորական տեղամասերում գիտական ընթերցումների կազմակերպում ԱրՊՀ դասախոսների, ասպիրանտների, մագիստրանտների, ուսանողների ուժերով:

13. 2014թ. հոկտեմբեր – նոյեմբեր - Հայաստանի Հանրապետության և Արցախի բուհերի համագործակցության շրջանակներում գիտական ընթերցումների կազմակերպում ԱրՊՀ-ում /պարբերաբար տարվա ընթացքում/՝ մագիստրանտների և ուսանողների մասնակցությամբ /Մինասյան Էդիկ՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի ղեկան, պատմական գիտությունների դոկտոր, Դավիթ Վազգենի Գասպարյան՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, <<Հայոց ու գրականություն>> ամսագրի գլխավոր խմբագիր, Մանասյան Ա. - փ.գ.դ., տնտեսագետներ Մաթևոսյան Ա. – տ.գ.դ., Հակոբյան Լ. – տ.գ.դ., Թավադյան Մ. – տ.գ.թ. /

14. Թեմատիկ ցուցահանդեսների կազմակերպում / Հայագիտական կենտրոն, Լ. Ղալայան/, զրքերի ֆոնդի ավելացում, արխիվային նյութերի հավաքում Հայագիտական կենտրոնի համար: 2014-2015 ուս. տարում գրադարանը ստացել է 2839 միավոր գիրք, որից 125-ը Հայագիտական կենտրոնից:

15. 2014թ. նոյեմբերի 22-ին - Գիտաժողովի կազմակերպում նվիրված ԵՊՀ-ի 90-ամյակին և ԱրՊՀ 45-ամյակին.մասնակցել են 2 համալսարանների ուսանողները:
16. 2014 թ. դեկտեմբերի 11-13-ին - Գիտական ընթերցումների կազմակերպում ՀՀ կառավարման Ակադեմիայի դասախոսների կողմից:
17. 2015 թ. մարտի 12 - ին - Սոկրատ Խանյանի <<Արցախի սիրտը>>գրքի շնորհանդեսը:
18. 2015 թ. ապրիլի 27 - ին - Սիլվա Մինասյանի <<Հովհաննես Շիրազ>>գրքի շնորհանդեսը:
19. Գիտական ընթերցումների կազմակերպում՝ նվիրված արցախյան պատերազմի հերոս Թաթուլ Կրպեյանին,մասնակցել էր դուստրը՝ Ասպրամը:
20. 2015թ. ապրիլի 10-ին - Գիտական ընթերցումների կազմակերպում ՀՀ Արդարադատության Ակադեմիայի ռեկտոր Ռուբեն Մելիքյանի մասնակցությամբ:

Հաշվետվություն

ԱրՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների գծով պրոռնկտորի

Հոգեբանական գիտ, թեկնածու, դոցենտ Վիտյա Բենիկի Յարամիշյան

2014-2015թ.թ. ուսումնական տարում, ուսումնական թրեքտորի գործընթացին զուգահեռ, ակտիվ նպատակային աշխատանքներ են կատարվել նաև ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների ուղղությամբ: Իրականացվող աշխատանքների համար կայուն հիմք է հանդիսացել ԱրՊՀ ռեկտորի 2013-2018թ.թ. գործունեության Ծրագիրը, որի կարևորագույն դրույթներից մեկը ուսանողների հետ տարվող աշխատանքների կատարելագործումն է, ուսանողամետ և ուսանողակենտրոն ուսուցման ամրապնդումը:

Ուսումնական տարին հագեցած է եղել բազմաթույթ միջոցառումներով: Ուսանողների հետ անմիջականորեն աշխատանք կատարող ստորաբաժանումներն ու մասնագետները, ինչպես նաև իրենք՝ ուսանողական ինքնավար կառույցները, հաջողությամբ են կատարել առաջադրված խնդիրները: Կազմակերպվել են ներհամալսարանական և արտահամալսարանական հանդիպումներ (թվով 30), ներքեր (թվով 4), ուսանողական և միջազգային գիտաժողովներ, գիտական ընթերցումներ (թվով 10), ուսանողական փառատոներ, հանդիպումներ, էքսկուրսիաներ, ինտելեկտուալ խաղեր և մրցույթներ, տարաբնույթ այլ միջոցառումներ: Խորացվել է հայաստանյան առաջատար բուհերի հետ ծավալված համագործակցությունը՝ կազմակերպելով Թաթուլ Կրպեյանի 50-ամյակին նվիրված գիտաժողով, «<100 ուսանող՝ 100 ծառ>> ակցիա, թվով 40 ուսանողների եռօրյա հանգստի կազմակերպում Ծաղկաձորում, մասնակցություն Ուրախների և հնարամիտների համահայկական փառատոնին: Նոր համագործակցային պայմանագրեր են ստորագրվել և միջոցառումներ իրականացվել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի, Կառավարման պետական ակադեմիայի հետ: Հետևողականորեն առաջ է տարվել եվրոպական կրթական դաշտին ներգրավվելու քաղաքականությունը՝ զարգացնելով համագործակցությունը մի շարք հեղինակավոր բուհերի հետ (Լյովենի Լյաթովիկ համալսարան, Բասկերի երկրի համալսարան, Յագելոնյան համալսարան, Տարտուի համալսարան): Կազմակերպվել են հանդիպումներ արտերկրից ժամանած հյուրերի հետ՝ հոգեբանության պրոֆեսոր Լևոն Բադդասարյանի, «Արտույտների ազարակը» գրքի հեղինակ Անտոնիո Արալանի, ՀՀ-ում ԱՄՆ նախկին դեսպան Հենրի Մորգենթաուի ծոռան, «Մոսկվայի հայ համայնքը՝ հայ ուսանողությանը» հիմնադրամի տնօրեն Արտավազ Յալաչիբեկյանի, ՌԴ ԲԳԱ ակադեմիկոս Կառլեն Բոչարյանի և այլ ճանաչված անձանց հետ: Այս առումով ուշագրավ էր ԱրՊՀ պատմության այցը Բելգիայի Թագավորություն՝ Լյովենի Լյաթովիկ համալսարանի հետ հիմնված համագործակցության խորացման նպատակով:

Ծարունակվել են համատեղ միջոցառումները ամառային արձակուրդների ժամանակ, որոնց թվում՝ ամառային դպրոցների և ճամբարների կազմակերպումը ՀՊՏՀ-ի (մոտ երկու տասնյակ ուսանողների հանգստի կազմակերպումը Դիլիջանում), ԵՊՀ-ի (համատեղ ամառային ճամբարի կազմակերպումը Տոբում, ծառատունկը Բերձորում), ՀՊՄՀ-ի (միջազգային ուսանողական համաժողով Ադալնաձորում), «Բազմ-2015»-ի և այլ բուհերի հետ:

Հաշվետու ժամանակաշրջանի հիշարժան միջոցառումներից պետք է համարել հանդիպումները ՀՀ և ԼՂՀ պետական կառավարման մարմինների ղեկավարների (ԱԺ նախագահ Ա.Ղուլյանի, վարչապետ Ա.Հարությունյանի), նախարարների (Ա.Աշոտյան, Ս.Ասրյան, Մ.Հակոբյան, Հ.Ղախրամանյան), գերատեսչությունների ղեկավարների (Ս.Շահվերդյան), ճանաչված այլ գործիչների (իրավաբան Ռուբեն Մելիքյան, հոգեբան Սամվել Խուդոյան) հետ:

Ուսանողական աշխատանքներին առանձնակի հետաքրքրություն և ոգևորությունն հաղորդում ԱրՊՀ շրջանավարտների համար կազմակերպված միջոցառումները: Ձևավորվող ավանդույթի համաձայն, բակալավրիատի լավագույն շրջանավարտներին դիպլոմներ է հանձնել Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, իսկ մագիստրոսների համար ԱրՊՀ-ում կազմակերպվել է դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողություն:

Առանձնակի շուքով են կազմակերպվել Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցի (ուսանողական գիտաժողով, «Պարզևի 100 կյանք», «Հիշում եմ և պահանջում», Օգանյանական ընթերցումներ, ցուցահանդեսներ, ֆակուլտետային միջոցառումներ) և ԱրՊՀ հիմնադրման 45 ամյակին նվիրված միջոցառումները՝ հրավիրելով ուսանողական գիտաժողովներ, քննարկումներ, հանդիսավոր նիստեր:

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք այցելություններ Պաշտպանության բանակի զորամասեր, հանդիպումներ ՊԲ-ում ծառայություն անցնող ԱրՊՀ ուսանողների հետ: Նյութական աջակցություն է ցուցաբերվել սոցիալական խնդիրներ ունեցող և ուսման մեջ առաջադիմող ուսանողներին:

Ակտիվ համագործակցություն է ծավալվել հանրապետության երիտասարդական-հասարակական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների հետ, իրականացվել են համատեղ երթեր, ակցիաներ, այլ միջոցառումներ:

ԱրՊՀ մի շարք ներքին կանոնակարգերի մշակումը և գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնելը եղել և մնում է մեր գործունեության գլխավոր ուղղություններից մեկը: Հաշվետու տարում մեր անմիջական մասնակցությամբ մշակվել և գիտական խորհրդի կողմից ընդունվել են մի քանի կարգեր ու կանոններ, այդ թվում <<Հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման ուղեցույցը>>, <<ԱրՊՀ ուսանողներին կրթաթոշակ տրամադրելու կարգը>>, <<Նպաստառու ուսանողների առաջադիմության հաշվառման մրցույթի անցկացման կարգը>>, <<Ուսանողի էլեկտրոնային փոստի հասցեի տրամադրման և օգտագործման կարգը>>, ինչպես նաև ակտիվ մասնակցությունը <<Առաջարկությունների, դիմում բողոքների ներկայացման կարգը>>, <<Փոխատեղման կազմակերպման կարգի>>, <<Ֆակուլտետների տեսուչների, գործակարգավորիչների և լաբորատների գործառնական պարտականությունների>> <<Ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման կարգի>> և այլ փաստաթղթերի մշակման աշխատանքներին:

Լրատվամիջոցներում լուսաբանվել է ԱրՊՀ ներքին և արտաքին կյանքը: Տպագրվել է <<Արցախի համալսարան>> պաշտոնաթերթը 9 և <<Քո ժամանակը>> ուսանողական թերթը, ԱրՊՀ պաշտոնական կայքէջում տեղադրվել է համալսարանի կյանքը լուսաբանող ավելի քան 150 նյութ՝ ռուսերեն և անգլերեն թարգմանություններով, սոցիալական ցանցեր ներբեռնված նույնքան նյութեր՝ համապատասխան լուսանկարներով, ԱրՊՀ մասին պատմող 4 կարճամետրաժ ֆիլմ, մոտ 35 տեսանյութ, հեռուստաէկրաններին տեղադրված մոտ 61 տեսանյութ, հայտարարություններ և այլն:

Ակտիվացել է համագործակցությունը ԼՂՀ-ում գործող տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների և անհատ լրագրողների, ինչպես նաև ԼՂՀ ԱԳՆ, ԵՊՀ, ՎՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների, հանրային կապերի և լրատվության բաժինների հետ:

Արցախի պետական համալսարանի հետագա զարգացումը՝ համաշխարհային գործընթացներին համահունչ, ժամանակի հրամայականն է: Այս ոչ դյուրին խնդրի իրականացմանը կնպաստեն այն հաստատականությունը և վճռականությունը, որոնք բնորոշ են մեր համալսարանի կոլեկտիվին:

Հաշվետվություն
2014-2015թթ. ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՄԱՍԻՆ

ԱրՊՀ վարչական աշխատանքների գծով պրոռենկտոր՝ Կ.Վ. Առուշանյան

Ինչպես յուրաքանչյուր ուսումնական տարի այս տարին ևս նշանավորվել է նոր ձեռքբերումներով: Ծարունակվել են համալսարանի նյութական բազայի հարստացումն ու մասնաշենքերի ընթացիկ նորոգումները:

2015թ փետրվար ամսվա ընթացքում «Բեյզ Մեթրոս» ՓԲԸ ֆինանսավորմամբ կապիտալ վերանորոգվել և կահավորվել է (կոմբինացված պահարան, կոմբինացված սեղաններ, պատի ժամացույց, համակարգչային կոմպլեկտ) ԱրՊՀ 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկի Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնը 2856.7 հազար դրամի չափով, 2015թ հունիս-հուլիս ամիսների ընթացքում ԼՂՀ Զաղաքաշինության նախարարության կողմից կապիտալ վերանորոգվել է ԱրՊՀ 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկի ֆրանսերենի կենտրոնը, 2015թ հուլիս ամսվա ընթացքում կապիտալ վերանորոգվել է ԱրՊՀ 2-րդ մասնաշենքի 1-ին հարկի N 4 և 8 լսարանները, 2015թ հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում կապիտալ վերանորոգվել է ԱրՊՀ հիմնական մասնաշենքի սպորտդահլիճը, 2015թ սեպտեմբեր ամսվա ընթացքում կապիտալ վերանորոգվել է ԱրՊՀ հիմնական մասնաշենքի N 53 լսարանը, 2015թ նոյեմբեր ամսից ընթացքում է 3-րդ մասնաշենքի 3-րդ հարկի կապիտալ վերանորոգման աշխատանքները:

2015թ տարվա ընթացքում շարունակվել են աշխատանքները հիմնական մասնաշենքի նկուղային հարկի, 1-ին հարկի N 2, 4, 6, 8 լսարանների, ՆԶՊ ֆակուլտետի դեկանի աշխատասենյանի, մասնակի վերանորոգվել է հիմնական մասնաշենքի 28 և 49 լսարանները, մասնակի վերանորոգվել է հիմնական մասնաշենքի միջանցքի պատերը, դրսի պատերը, հանրակացարանի հյուրասենյանի խոհանոցը, մասնակի փոխարինվել է հիմնական մասնաշենքի և 3-րդ մասնաշենքի տանիքները:

Ընթացիկ վերանորոգումներ են ընթացել բոլոր մասնաշենքերի լսարաններում, աշխատանքային սենյակներում, միջանցքներում, պահակակետերում, կաթսայատներում, նկուղներում:

Լարված աշխատանքներ են ընթացել ջեռուցման շրջանում բարոյապես և ֆիզիկապես մաշված կաթսայատների անդուլ աշխատանքի ապահովման համար: 2015թ հուլիս ամսվա ընթացքում մասնակի փոխարինվել և վերանորոգվել է հիմնական մասնաշենքի ջեռուցման համակարգը:

Աշխատանքներ են իրականացվել սեփական ջեռուցման ցանցի և կաթսանների նորոգման, կաթսայատների անխափան աշխատանքների ապահովման ուղղությամբ:

ԱրՊՀ բոլոր մասնաշենքերում մասնակի փոխարինվել են հայելիները:

ԱրՊՀ ՆԶՊ ֆակուլտետի ֆիզդաստիարակության ամբիոնի դասընթացները նորմալ կազմակերպելու համար 2015թ ընթացքում ձեռք է բերվել 102100 դրամի մարզական գույք:

ԱրՊՀ հանրակացարանի մասնաբաժիններում տեղադրման նպատակով գնվել են 17 հատ սառնարան 1992.2 հազար դրամ արժեքով:

2014-2015թթ ուսումնական տարում ԱրՊՀ համար ձեռք է բերվել 5207.0 հազ.դրամի կահույք:

2014-2015թթ ուսումնական տարում ԱրՊՀ համար ձեռք է բերվել 13 կոմպլեկտ համակարգիչ 2941.0 հազ.դրամի, 2 հատ մոնիտոր, 3 հատ UPS, 1 հատ տպիչ սարք, 1 հատ պրոյեկտոր, 9 հատ ջրի սարք ընդամենը 1569000 դրամ արժեքով:

Մշտական աշխատանքներ են տարվում անձնակազմի սպասարկման բաժնի միջոցով համալսարանի մաքրության, սանիտարահիգիենիկ վիճակի և կարգուկանոնի պահպանության ուղղությամբ: Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել համալսարանի բակի բարեկարգման, պարտեզների պահպանման ուղղությամբ:

2015թ ընթացքում ԱրՊՀ հյուրասենյակի ծառայությունից օգտվել են 30 անձ, որից 23-ը տղամարդ և 7-ը կին:

2014-2015թթ ուսումնական տարում ԱրՊՀ համար ձեռք է բերվել 276.7 հազար դրամի դեղորայք: 2014-2015թթ ուսումնական տարում ԱրՊՀ բուժկետ են հաճախել 3903 մարդ, որից 3039 աշխատողներ և 864 ուսանողներ: Բժշկի նշանակումով կատարվել է սրսկում ներերակային՝ 25 աշխատող և միջվանային՝ 30 աշխատող:

Անց է կացվել ակցիա «Փրկենք 100 կյանք», որին մասնակցել են 199 ուսանող:

Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ ԱրՊՀ գիտական քարտուղար կ.գ.թ. դոցենտ, Գ.Գ. Մարգարյան

2014-2015 ուսումնական տարում ԱրՊՀ-ում հրավիրվել է գիտական խորհրդի 14 նիստ և քննարկվել օրակարգային 67 հարց /որից 25-ը՝ կանոնակարգային/: Գիտխորհրդի կողմից ընդունված որոշումները ծանուցվել են համապատասխան ստորաբաժանումներին, վերահսկվել դրանց կատարման ընթացքը և արդյունքների մասին զեկուցվել պարբերաբար:

Համալսարանի /2014-2015թթ./ զարգացման ծրագրի շրջանակներում կատարված կառուցվածքային փոփոխությունների, ինչպես նաև մի շարք ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնավարման ժամկետների ավարտման կապակցությամբ կազմակերպվել են ընտրություններ, համակարգվել դրանց ընթացակարգն ու արդյունքները:

ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների համալրման համար համալսարանը պարբերաբար հանդես է եկել հայտարարությամբ, կազմակերպվել և անց են կացվել ընտրություններ: Այդ ուղղությամբ սերտ համագործակցություն է իրականացվել համալսարանի ստորաբաժանումների և ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի հետ: Հաշվետու ժամանակահատվածում դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչումները հաստատելու և համապատասխան դիմումներով ամրագրելու նպատակով ՀՀ ԲՈՀ են ներկայացվել ԱրՊՀ դասախոսների հայտեր: Ներկայացված հայտերից 3 դոցենտի և 1 պրոֆեսորի գիտական կոչումները հաստատվել և ամրագրվել են դիմումներով: Դոցենտի գիտական կոչում հայցելու մեկ հայտ ընթացքավորված է:

Արցախում կրթության և գիտության կազմակերպման ու զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար և ծննդյան 65-ամյակի կապակցությամբ <<ԱրՊՀ Ոսկե մեդալ>>-ով պարգևատրվել է՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավիկ Արմիկի Սարյանը:

ԱրՊՀ զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար <<ԱրՊՀ Ոսկե մեդալ>>-ով պարգևատրվել է՝ <<ԴՏԵԼԵԿՈՍ>> ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռաֆ Սեզարի Յիրիկյանը և <<ՄԻՆՈՓՄԻՍ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԲԸ տնօրեն Հովիկ Զավենի Մուսայելյանը:

ԱրՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչում է շնորհվել <<ՄԻՆՈՓՄԻՍ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԲԸ ուսումնական դեպարտամենտի տնօրեն ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ տ.գ.դ., պրոֆեսոր Վազգեն Շավարշի Մելիքյանին, Լյովենի կաթոլիկ համալսարանի պրոֆեսոր Բերնար Կուլիին:

Լյովենի կաթոլիկ համալսարանի և ԱրՊՀ-ի միջև գիտական կապերի հաստատման համար ԱրՊՀ պատվավոր դոկտորի կոչում է շնորհվել Եվրոպական խորհրդարանի քաղաքական խորհրդական, միջազգային իրավունքի ու եվրոպական հետազոտությունների դոկտոր Յանիս Խարալամպիդիսին:

Համալսարանի բնական և հասարակական գիտությունների ուղղվածության գիտական տեղեկագրի հերթական համարների տպագրությունը կազմակերպելու և հրատարակչության գործունեության վերահսկողությունն իրականացնելու համար հրավիրվել է խմբագրական կոլեգիայի նիստ: Հրատարակվել է <<ԱրՊՀ տեղեկագիր>>-ի հասարակական և բնական ուղղվածության համարները: Տպագրության է երաշխավորվել նաև 10 գիտական, գիտամեթոդական և ուսումնամեթոդական աշխատանքներ: Նշված տպագրական աշխատանքները նպաստում են համալսարանի գիտական բազայի համալրմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են զգալի աշխատանքներ հայցորդների և ասպիրանտների գիտահետազոտական գործունեությունը խթանելու նպատակով: Հաստատվել են թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների գիտական թեմաներ /2-թեկնածուական, 2-դոկտորական/ և թեմաների ղեկավարներ, ինչպես նաև հայցորդների ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլաններ:

ԱրՊՀ մի շարք դասախոսներ ներգրավված են ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտական պետական կոմիտեի և ԼՂՀ Գիտական կենտրոնի կողմից ֆինանսավորվող թեմաների կատարման խմբերի մեջ, որոնց ընթացիկ աշխատանքներում ընդգրկվել են նաև որոշ ուսանողների աշխատանքներ:

Ստեղծվել է ԱրՊՀ գիտխորհրդին կից գործող որակի ապահովման մշտական հանձնաժողով հետևյալ կազմով.

Վ.Ա. Մաֆարյան /նախագահ/

Ս.Վ. Թովմասյան

Շ.Շ. Սարյան

Ն.Վ. Առաքելյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱրՊՀ գիտական խորհրդին կից գործող

մշտական հանձնաժողովների 2014-2015 ուսումնական տարում կատարած աշխատանքների վերաբերյալ

1. ԱրՊՀ գիտխորհրդին կից գործող մրցութային հանձնաժողով

Հաշվետու ժամանակաշրջանում ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների համալրման համար համալսարանը 5 անգամ հանդես է եկել հայտարարությամբ, որի հիման վրա կազմակերպվել և անց են կացվել ընտրություններ: ԱրՊՀ-ում գործող կարգերի համապատասխան մրցութային հանձնաժողովը սահմանված ժամկետներում ուսումնասիրել և տվել է համապատասխան եզրակացություն մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաթեթների վերաբերյալ:

2. ԱրՊՀ գիտխորհրդին կից գործող ներքին կանոնակարգերի մշակման հանձնաժողով

ԱրՊՀ գիտխորհրդի ներքին կանոնակարգերի մշակման հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակաշրջանում մշակվել, տարբեր հանձնաժողովներում քննարկվել և գիտխորհրդի հաստատման են ներկայացվել՝

- «Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ կրթության որակի ապահովման քաղաքականությունը,

- «Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը,

- «Հայցորդի ուսումնառության կազմակերպման պայմանների վերաբերյալ» պայմանագրի նմուշը,

- «Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի մշտական հանձնաժողովների աշխատակարգերը,

- Ռեֆերատի պատրաստման և ներկայացման կանոնակարգը,

- Առաջարկությունների, դիմում-բողոքների ներկայացման և քննարկման կարգը,

- «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման ուղեցույցը,

- «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգը և հարցաթերթը,

- «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության նպաստառու ուսանողների առաջադիմության հաշվառման և մրցույթի անցկացման կարգը,

- «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողի էլեկտրոնային փոստի հասցեի տրամադրման և օգտագործման կանոնները,

- «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողների փոխատեղման գործընթացի կազմակերպման կանոնակարգը,

- «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆակուլտետների տեսուչների, գործակարգավորիչների, ամբիոնների լաբորանտների գործառնական պարտականությունները,

- ԱրՊՀ ուսանողներին կրթաթոշակ տրամադրելու կարգը,

- «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական պլանների ձևավորման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնավածության չափորոշիչների որոշման կանոնակարգը և ուսումնական աշխատանքների հաշվառման նորմերը,

- «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման կարգը:

Փոփոխություններ և լրացումներ են կատարվել հետևյալ կարգերում.

-«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հանրակացարանում ուսանողների բնակության կարգում՝ հաստատված 2014 թվականի մարտի 28-ի N11-Լ որոշմամբ,

-«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության «Կուրսային (դասընթացային-գիտական) աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության», «Ավարտական աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության» ու «Մագիստրոսական թեզի նախապատրաստման և պաշտպանության» կանոնակարգերում՝ հաստատված 2014 թվականի հունվարի 31-ի N1-Լ որոշմամբ,

-«Ուսանողների գիտելիքների համակարգչային թեստային ստուգման գործընթացի» կանոնակարգում՝ հաստատված 2012 թվականի հոկտեմբերի 15-ի որոշմամբ,

-«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգում՝ հաստատված 2014 թվականի հունիսի 19-ի N27-Լ որոշմամբ,

-«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգում՝ հաստատված 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N13-Լ որոշմամբ,

-«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ներքին կարգապահական կանոններում՝ հաստատված 2014թ. փետրվարի 26-ի N2-Լ որոշմամբ,

-ԱրՊՀ ՊՈԱԿ մագիստրատուրայի ընդունելության կարգում՝ հաստատված 2014թ. օգոստոսի 28-ի N39-Լ որոշմամբ:

Ուժը կորցրած է ճանաչվել «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆակուլտետների տեսուչների գործունեության կանոնակարգը՝ հաստատված 2012 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ:

Հանձնաժողովը պարբերաբար ուսումնասիրում է Հայաստանի այլ ԲՈԻՀ-ի կանոնա կարգերը՝ փորձելով լավագույն փորձը կիրառության մեջ դնել նաև մեր ԲՈԻՀ-ում:

3. ԱրՊՀ գիտախորհրդին կից գործող ուսումնամեթոդական աշխատանքների հանձնաժողով

-Վերամշակվել է <<Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման ժամանակավոր կարգ>>-ը:

-Մշակվել է <<Ռեֆերատի պատրաստման և ներկայացման>>, <<Ֆակուլտետների տեսուչների գործակարգավորիչների, ամբիոնների լաբորանտների գործառնական պարտականությունների>> կանոնակարգերը:

-Կատարվել են պրակտիկայի կազմակերպման և անցկացման ստուգումներ որոշ մասնագիտություններում:

-Իրականացվել են հանդիպումներ բոլոր ամբիոնների հետ, որտեղ քննարկվել են հարցեր դասախոսությունների և գործնական պարապմունքների որակի բարձրացման, ինչպես նաև ընթացիկ քննությունների անցկացման և տեղեկագրերի լրացման վերաբերյալ:

-Մշակվել են նոր մասնագիտությունների ուսումնական պլանները:

-Կազմակերպվել են On-line դասախոսություններ քաղաքագիտությանը վերաբերող թեմաներով, որոնց մասնակցել են ուսանողներ և դասախոսներ:

-Քննարկվել և երաշխավորվել են տպագրության 1 աշխատություն, 1 գիտական աշխատանք, 2 ուսումնամեթոդական ձեռնարկներ, 1 մեթոդական ձեռնարկ և 1 դասագիրք:

4. ԱրՊՀ գիտախորհրդին կից գործող գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրման հանձնաժողով 2014- 2015թ. ուսումնական տարում գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրման հանձնաժողովի կողմից քննարկվել են հետևյալ հարցերը

- Բ.գ.թ., դոցենտ Ս.Մինասյանի <<Հովհաննես Շիրազ>>գրքի հրատարակման մասին:

- Ա.Վ. Պետրոսյանի <<Ծրագիր: Նոր պատմություն, Եվրոպայի և Ամերիկայի երկրներ (II ժամանակաշրջան)>> ուսումնական ծրագիրը հրատարակման երաշխավորելու մասին:

-Ավագ դասախոս Ի.Ռ. Բաղդասարյանի <<Բետոններ>> ուսումնական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու մասին

-Պ.գ.թ., դոցենտ Ռոնա Արամի Բալայանի <<Կովկասում մղած պատերազմները և հայ կամավորական շարժումները 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդում>> ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու մասին:

-Ավագ դասախոս Ֆ.Ռ. Այվազովայի “English Grammar in Tests” քերականության գործնական-մեթոդական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու մասին:

<<ԱրՊՀ Գիտական տեղեկագիր>> ամսագրին ներկայացված ներքոնշյալ գիտական աշխատանքների տպագրության հարցը:

ա/ Մ.Ե.Ապրեսյանի <<Կորագիծ ինտեգրալներ>>

բ/ Գ.Հ.Սահակյանի <<Մի սովորական դիֆերենցիալ հավասարումների համասեռ համակարգերի դասի ոչ օսցիլացիայի մասին>>

գ/ Լ.Ծ. Մուսայելյանի <<Որոշ գնահատական արդյունքներ Լոբաչևսկու ֆունկցիայի նկատմամբ>>

դ/ Եվ. Ս. Բալասանյանի <<Անիգոտրոպ երկշերտի երկու խառը եզրային խնդիրների ապիմպոտիկ լուծումը>>

ե/ Վ.Վ.Առստամյանի <<Ուսումնական գործընթացում, վերահսկման և որակի կառավարման մաթեմատիկական մոդելի ստեղծումը>>

զ/ Ռ.Վ.Ավետիսյանի <<Ուսումնական գործընթացում ՏՀՏ-ների դերն ու անհրաժեշտությունը>>

է/ Ա.Խ.Հարությունյանի <<Էլեկտրական բյուկ- սխեմաների հետազոտումը կառուցվածքային թվերի հանրահաշվի կիրառմամբ>>

- Ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակման երաշխավորման մասին

ա/ ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիանի ավագ դասախոս Արմինե Ռուբիկի Բադդասարյանի <<Սովորողների ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ու որակի բարձրացման մի քանի հարցեր>>

բ/ ԱրՊՀ հայոց լեզվի ամբիոնի ավագ դոցենտ Հ.Ս.Ղազարյանի և դոցենտ Շ.Մ.Մինասյանի <<Լեզվական տարարժեքության մի քանի դրսևորումներ>>

5. ԱրՊՀ գիտախորհրդին կից գործող արտաքին կապերի և ուսանողների հետ տարվող աշխատանքների հանձնաժողով

Հանձնաժողովը 2014-15թ.թ. ուսումնական տարում զգալի աշխատանք է կատարել ԱրՊՀ զարգացման ռազմավարական ուղղություններից մեկի՝ ուսանողամետ ուսուցման դրույթների ներդրման ուղղությամբ՝ հիմնվելով ԱրՊՀ զարգացման 2013-2018թ.թ. ծրագրի ուղենշային դրույթների վրա: Մարտ-ապրիլ ամիսներին ծավալուն աշխատանքներ են կատարվել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների կազմակերպման ուղղությամբ՝ անցկացնելով ուսանողական գիտաժողով, զանազան ակցիաներ՝ «Պարզևիր 100 կյանք», «Հիշում եմ և պահանջում», Օգանյանական ընթերցումներ, ցուցահանդեսներ, ֆակուլտետային միջոցառումներ: Հանձնաժողովի նիստերում քննարկվել և առաջարկություններ են ներկայացվել գիտական խորհրդին: Հանձնաժողովի մասնակցությամբ փոխդասնականության և լրացումներ են կատարվել «Ուսանողների կողմից պրոֆեսորա-դասախոսական կազմի գիտամանկավարժական և բարոյագործական հատկանիշների գնահատման կանոնակարգի» մեջ, մշակվել և գործողության մեջ է դրվել «Բանավեճի ակումբի» ԱրՊՀ ուսանողներին կրթաթոշակներ տրամադրելու», «Ուսանողների հետ տարվող աշխատանքների, հանրային կապերի և լրատվության բաժնի», «Ուսանողական խորհուրդ կազմակերպության» և «Նպաստառու ուսանողների առաջադիմության հաշվառման և մրցույթի անցկացման» կանոնակարգերը, «Կաբինետի վարչի գործառական պարտականությունները»: Աշխատանք է կատարվել ԱրՊՀ ուսանողի էլեկտրոնային փոստի հասցեի տրամադրման և օգտագործման կանոնները հաստատելու և ներդնելու ուղղությամբ, ընդլայնել է ավագ դպրոցների աշակերտների հետ տարվող աշխատանքը, ամրապնդվել է համագործակցությունը ՊԲ գործառասների հետ, կազմակերպվել այցելություններ և հանդիպումներ:

Արտաքին կապեր. Հանձնաժողովի գործունեության կարևորագույն ուղղությունը եղել է արտաքին կապերի և միջբուհական համագործակցության զարգացումը: Ծարունակվել է ակտիվ համագործակցությունը ՀՀ բուհերի հետ: Մի շարք բուհերի հետ հաջողությամբ կյանքի են կոչվել տարաբնույթ ծրագրեր: Կազմակերպվել են ուսանողական համատեղ միջոցառումներ՝ Թաթուլ Կրպեյանի 50 ամյակին նվիրված գիտաժողով, «100 ուսանող-100 ծառ» ակցիա, թվով 40 ուսանողների հանգստի կազմակերպում Ծաղկաձորում, մասնակցություն Ուրախների և հնարամիտների

համահայկական ուսանողական լիգայի եզրափակիչ մրցույթին և այլն: Համագործակցային ծրագրերի իրականացումը արդյունավետ է եղել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Խ.Աթուկյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի, Վանաձորի Հ.Թումանյանի անվ. պետական համալսարանի հետ: Նոր համաձայնագրեր են ստորագրվել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի և Հայաստանի պետական կառավարման ակադեմիայի հետ: Հուլիս-օգոստոս ամիսներին կազմակերպվել են ամառային դպրոցներ և ճամբարներ ՀՊՏՀ-ի, ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի (ուսանողական ունիվերսիտադա) հետ, « Բազե-2015»-ը Ծաղկաձորում և այլ միջոցառումներ:

Հաշվետու ժամանակահատվածում ստեղծվել են արտերկրի բուհերի հետ համագործակցային կապերի ընդլայնման նոր հնարավորություններ: Առավել նշանակի էր ԱրՊՀ պատվիրակության այցը Բելգիա և Լյովենի կաթոլիկ համալսարանի հետ փոխգործակցության շրջանակի ընդլայնումը: Ակտիվ շփումներ են իրականացվել Բասկերի երկրի համալսարանի հետ: Կազմակերպվել է Տարտուի համալսարանի մի խումբ ուսանողների ընդունելությունը ԱրՊՀ-ում, ինչպես նաև հանդիպումներ արտերկրից ժամանած հյուրերի՝ հոգեբանության պրոֆեսոր Լևոն Բադդասարյանի, « Արտույտների ազարակը» գրքի հեղինակ Անտոնիո Արսլանի, ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի ծոռան, «Մոսկվայի հայ համայնքը՝ հայ ուսանողությանը » կազմակերպության տնօրեն Արտավազ Յալաշիբեկյանի, ՌԴ ԲԳԱ ակադեմիկոս Կառլեն Քոչարյանի և այլ ճանաչված անձանց հետ: Կազմակերպվել են ուսանողների հանդիպումները ԼՂՀ նախագահ Բ.Սահակյանի, ԱԺ նախագահ Ա.Դուլյանի, վարչապետ Ա.Հարությունյանի, նախարարների, գերատեսչությունների ղեկավարների, ճանաչված այլ գործիչների հետ: Աշխատանք է կատարվել ԱրՊՀ շրջանավարտների հետ կապերն ամրապնդելու ուղղությամբ, կազմակերպվել է մագիստրոսների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողություն:

6. ԱրՊՀ գիտխորհրդին կից գործող որակի ապահովման հանձնաժողով

2014 -2015 ուս.տարում ԱրՊՀ ԳԽ կից որակի ապահովման մշտական հանձնաժողովը ԱրՊՀ ԿՈԱՄՀ բաժնի և ուսումնական գծով պրոռեկտորի հետ համատեղ քննարկել է համալսարանի ստորաբաժանումների կողմից ներկայացրած պլանների փոփոխության մասին հայտերի հիմնավորումը և դրա համապատասխանությունը պլանների հաստատման ԱրՊՀ պահանջներին:

Մասնավորապես՝ Աշխարհագրություն՝ մասնագիտության պլանում «Ուսումնական փորձուսուցում» վերանվանվել է « Ուսումնական փորձուսուցում - 1» «Արտադրական փորձուսուցումը» «Ուսումնական փորձուսուցում - 2» իսկ «Նախադիպլոմային փորձուսուցումը» դարձվել է «Արտադրական փորձուսուցում »:

«Հայոց լեզվու և գրականություն» (4), «Լրագրություն» (7), «Նախադպրոցական մանկավարժություն և հոգեբանություն, «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա », «Անգլերեն լեզու և գրականություն »,« Կերպարվեստ » մասնագիտությունների մի շարք առարկաների եզրափակիչ գնահատականով ավարտվող մոդուլները » փոխարինվել են առանց եզրափակիչ գնահատումով մոդուլների:

«Կերպարվեստ» մասնագիտության 2013–2017թթ., 2012 – 2016թթ.և 2013 -2014 թթ. ուսումնական պլաններում փոփոխություններ են արվել փորձուսուցումն անցկացնելու ժամկետներում՝ կիսամյակից կիսամյակ:

«Հեռահաղորդակցություն » մասնագիտության 2012 – 2016թթ., 2013 – 2017թթ. և 2014 – 2018թթ. ուսումնական պլաններում եզրափակիչ գնահատումով մի քանի դասընթացներ փոխարինվել են առանց եզրափակիչ գնահատումով դասընթացների:

Համապատասխան նախագիծ է ընդունվել այն խմբերի մասին, որտեղ ծանրաբեռնվածությունը կատարվում է նախատեսված ժամաքանակի 30%-ի չափով (եզրափակիչ գնահատումով դասընթացներն անցկացնել եզրափակիչ բանավոր քննությամբ, առանց ընթացիկ ստուգումների, 16 միավորով, իսկ առանց եզրափակիչ գնահատումով դասընթացները կազմակերպել դասերի ժամանակ, մեկ ընթացիկ ստուգումով)

Նշված նախագծերը հաստատվել են ԱրՊՀ գիտխորհրդի կողմից:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Հայրապետյան Էլենորա Արմենակի, մ.գ.թ., դոցենտ

Ֆակուլտետի մասնագիտությունները և մասնագիտացումները

- 0230 - Հայոց լեզու և գրականություն
 0214 - Լրագրություն
 0217 - Անգլերեն լեզու և գրականություն
 0233 - Ռուսաց լեզու և գրականություն

Մագիստրատուրա. Մասնագիտություն (մասնագիտացում)

- Հայոց լեզու** – (Ժամանակակից հայոց լեզու)
Հայ գրականություն – (Հայ նորագույն գրականություն)
Լրագրություն – լրագրություն
Ռուսաց լեզու – ռուսաց լեզու
Ռուս գրականություն – ռուս գրականություն
Անգլերեն լեզու - անգլերեն լեզու

Մասնագիտություն, կրթական աստիճան	Ուսանողների թիվը՝ 384							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	պալ	վճ	պալ	վճ	պալ	վճ	պալ	վճ
Բակալավրիատ								
Հայոց լեզու և գրակ.	10	5	10	15	12	22	-	-
Լրագրություն	6	4	7	4	5	7	-	-
Անգլերեն լեզու և գրական.	10	14	14	24	10	38		
Ռուսաց լեզու և գրական.	11	14	8	7	11	22		
Մագիստրատուրա								
Հայոց լեզու	4	1	4	-	-	-	-	-
Հայ գրականություն	5	3	4	6	-	-	-	-
Լրագրություն	5	-	6	-	-	-	-	-
Ռուսաց լեզու	4	1	4	1	-	-	-	-
Ռուս գրականություն	4	2	6	3	-	-	-	-
Անգլերեն լեզու	12	-	7	2	-	-	-	-

I տարի	Ասպիրանտների թիվը՝ 4		
	I տարի	II տարի	III տարի
Հայոց լեզվի և նրա դասավանդ. մեթոդ.	-	-	1
Գրականության և ժողովրդականության	-	-	1
Ռուսաց լեզվի և գրականության	-	-	-
Անգլերեն լեզվի	-	-	2
Գերմաներեն և ֆրանսերեն լեզուների			
Ընդամենը	-	-	4

Շրջանավարտներ

Մասնագիտություն	Շրջանավարտների թիվը 43, այդ թվում գերազանց՝ 14	
	Բակալավրիատ (գեր.դիպլոմ.)	Մագիստրատուրա (գեր.դիպլոմ.)
Հայոց լեզու	-	4 (1)
Հայ գրականություն	-	10 (3)
Լրագրություն (ժուռնալիստիկա)	-	6 (4)
Ռուսաց լեզու	-	5 (0)
Ռուս գրականություն	-	9 (4)
Անգլերեն լեզու	-	9 (2)

Քննաշրջանների արդյունքները

Ձմեռային քննաշրջան

Մասնագիտություն, կրթական աստիճան	Քննաշրջանի ն մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուս. թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմություն % -ով
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Հայոց լեզու և գրականություն					
1-ին	15	-	-	1	100
2-րդ	25	-	1	-	96
3-րդ	34	-	1	-	97.1
Ընդամենը	73	-	2	1	97.3
Լրագրություն					
1-ին	10	-	-	-	100
2-րդ	11	-	1	-	90.9
3-րդ	12	-	-	-	100
Ընդամենը	33	-	1	-	97
Ռուսաց լեզու և գրականություն					
1-ին	26		1	1	96.2
2-րդ	14			2	100
3-րդ	33			1	100
Ընդամենը	74	-	1	4	98.6
Անգլերեն լեզու և գրականություն					
1-ին	36				100
2-րդ	38				100
3-րդ	48			1	100
Ընդամենը	122			1	100
Մագիստրատուրա					
Հայոց լեզու					
1-ին	5	-	-	1	100

2-րդ	4	-	-	2	100
Ընդամենը	9	-	-	3	100
Հայ գրականություն					
1-ին	8	-	-	2	100
2-րդ	10	-	-	1	100
Ընդամենը	18	-	-	3	100
Լրագրություն					
1-ին	5	-	-	-	100
2-րդ	6	-	-	6	100
Ընդամենը	11			6	100
Ռուսաց լեզու					
1-ին	5	-	-	1	100
2-րդ	5	-	-	-	100
Ընդամենը	10	-	-	1	100
Ռուս գրականություն					
1-ին	6			5	100
2-րդ	9			7	100
Ընդամենը	15			12	100
Անգլերեն լեզու					
1-ին	12	-	-	4	100
2-րդ	9	-	-	3	100
Ընդամենը	21	-	-	7	100
ԸՆԴՀԱՆՈՒՐ	386		4	38	99

Ամառային քննաշրջան

Մասնագիտություն, կրթական աստիճան	Քննաշրջանի ն մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուս. թիվը		Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմությո ւն %-ով
		պս	վճ		
Բակալավրիատ					
Հայոց լեզու և գրականություն					
1-ին	15	-	-	2	100
2-րդ	25	-	-	-	100
3-րդ	34	-	-	-	100
Ընդամենը	74	-	-	2	100
Լրագրություն					
1-ին	10	-	-	-	100
2-րդ	11	-	1	-	90.9
3-րդ	12	-	-	-	100
Ընդամենը	33	-	1	-	97
Ռուսաց լեզու և գրականություն					
1-ին	25				100
2-րդ	15			2	100
3-րդ	33			1	100
Ընդամենը	73	-	-	3	100
Անգլերեն լեզու և					

գրականություն	35			1	100
1-ին	38		1	3	97.4
2-րդ	48			10	100
3-րդ					
Ընդամենը	121		1	14	92.2
Լրագրություն					
1-ին	5	-	-	1	100
Ընդամենը	5	-	-	1	100
Ռուսաց լեզու					
1-ին	5			1	100
Ընդամենը	5			1	100
Ռուս գրականություն					
1-ին	6			5	100
Ընդամենը	6			5	100
Անգլերեն լեզու					
1-ին	12			8	100
Ընդամենը	12			8	100
ԸՆԴՀԱՆՈՒՐ	329		2	34	99.4

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 5

Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Ղազարյան Հասմիկ Սուրենի բ.գ.թ., դոցենտ

1. Բաբայան Օֆելյա Ենոքի -բ.գ.թ., պրոֆեսոր
2. Մինասյան Սիլվա Աշոտի - բ.գ.թ., դոցենտ
3. Յարամիշյան Միրա Բենիկի - մ.գ.թ., դոցենտ
4. Մինասյան Շողեր Մաղևստի- բ.գ.թ., դոցենտ
5. Սադյան Շուշանիկ Պավլիկի- բ.գ.թ., դոցենտ
6. Խաչատրյան Նունե Գևորգիի - բ.գ.թ., դոցենտ
7. Ավանեսյան Կարինե Համբարձումի - բ.գ.թ., դոցենտ
8. Զաքարյան Աիդա Սարգսի - մ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
9. Հակոբյան Կարինե Աշոտի - ավագ դասախոսի պաշտոնակատար
10. Պողոսյան Ժենյա Ռոմայի- ավագ դասախոս
11. Հասրաթյան Ծովինար Ալեքսանդրի -ավագ դասախոսի պաշտոնակատար
12. Հայրապետյան Լիանա Բենիկի-ավագ դասախոս
13. Սարգսյան Վեհանուշ Լևոնի -ավագ դասախոս

Ժամավճարային հիմունքներով աշխատող- Սարգսյան Արմեն Յուրիի -բ.գ.թ.,դոցենտ

Ամփոփում ամբիոնում կատարած գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Ամբիոնի գիտական աշխատանքների ուղղություններն են՝

1. Հայոց լեզվի (հայոց լեզվի պատմություն, բարբառագիտություն, ժամանակակից հայոց լեզու՝ նրկու տարբերակներով) հիմնահարցեր,
2. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի և խոսքի զարգացման հարցեր,
3. Ոչ մասնագիտական խմբերում հայոց լեզվի և խոսքի մշակույթի ուսուցման հարցեր:

Ամբիոնի դասախոսները տպագրել են ուսումնամեթոդական ձեռնարկներ, հոդվածներ, կազմել են կրեդիտային համակարգում ընդգրկված մասնագիտական դասընթացների ուղեցույցներ, ծրագրեր, թնստեր:

Ոչ մասնագիտական խմբերում աշխատող դասախոսները, հաշվի առնելով ուսանողների մասնագիտությունը, գիտելիքները, հավաքել են անհրաժեշտ նյութեր, կազմել բազմաբնույթ վարժություններ, որոնք հետագայում կրնադրվեն համապատասխան մասնագիտությունների ուսումնառմանը ձեռնարկներում:

Ամբիոնը ունի մեկ ասպիրանտ:

Ուսումնամեթոդական աշխատանքներ.

1. Զբոյցներ լեզվաբանության արդիական խնդիրների շուրջ.
2. Դասախոսների կողմից գիտական սեմինարների անցկացում և քննարկում.
3. Ուսանողների հետ տարվող անհատական խորհրդատվություններ.
4. Ուսանողների գիտական աշխատանքների կատարման վերահսկում.
5. Կ. Դավթյանի անվան հայոց լեզվի կաբինետի վերաբացում և միջոցառումների կազմակերպում.
6. Մագիստրանտների հետ անցկացվող գիտական սեմինարներ
7. Ներամբիոնային դասախոսումների անցկացում և քննարկում.
8. Դասախոսների գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքի վերահսկում.
9. Մասնագիտական հոդվածների քննարկումներ:

Ամբիոնի կողմից անցկացվող միջոցառումներ .

1. Մասնակցություն ԱրՊՀ 45-ամյակին նվիրված գիտաժողովին/ամբիոնի դասախոսներ/.
2. Միջոցառում Հաղորդի շրջանի Տումի գյուղում՝ նվիրված ակադեմիկոս Ս. Աբրահամյանի 90-ամյակին ԿԳՆ .ամբիոնի դասախոսներ/.
3. Մայրենիի օրվան նվիրված համալսարանական միջոցառում/Հ.Ս.Ղազարյան/.
4. Դոցենտ Ս.Մինասյանի <<Հովհաննես Շիրազ>> գրքի շնորհանդեսը.
5. Համալսարանական միջոցառում նվիրված Ցեղասպանության տարելիցին /դոցենտ Շ.Մինասյան/
6. Մասնակցություն Երևանում կայացած գիտաժողովին՝ նվիրված ակադեմիկոս Ս. Աբրահամյանի 90-ամյակին/Հ.Ղազարյան, Շ.Մինասյան, Ն.Խաչատրյան/:

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Դասագիրք	Մենագրություն	Ուս. ձեռնարկ	Ուսումնամեթ. ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիսներ
-	2		1	6	5

Հրատարակությունների ցանկ

- Ղազարյան Հ.Ս.** - Հնչերանգը և տրոհումը խոսքի մասային տարաբեքության տարբերակման միջոց <<ԱրՊՀ գիտական տեղեկագիր>> Ստեփանակերտ 1/2014, էջ 19-23:
- Ղազարյան Հ.Ս.** - Հոլովական զուգաձևությունները գոյականական համակարգում ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Զեկուցումների դրույթներ (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս.Աբրահամյանի նվիրված հանրապետական գիտաժողովի), Երևան 2015թ., էջ 35
- Բաբայան Օ.Ե.** - Գրաբարի ձևաբանական մի քանի համանուններ, <<ԱրՊՀ գիտական տեղեկագիր >> Ստեփանակերտ 1/2014, էջ 3-8:
- Մինասյան Ս.Ա.** - <<Հովհաննես Շիրազ>>, Ստեփանակերտ, 2015թ., 414 էջ:
- Մինասյան Շ.Մ.** - Ձևաբանական տարաբեքության մի քանի դրսևորումներ խոսքային մակարդակում, ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Զեկուցումների դրույթներ (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս.Աբրահամյանի նվիրված հանրապետական գիտաժողովի), Երևան 2015թ., էջ 39

Խաչատրյան Ն.Գ.-Փոխաբերությունը Վազգեն Օվյանի <<Լեռնակերտ>> վեպում ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,Զեկուցումների դրույթներ(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս.Աբրահամյանին նվիրված հանրապետական գիտաժողովի),Երևան 2015թ.,էջ 29

Մաղյան Շ.Պ.-Բառապաշարի դասակարգման մի շարք խնդիրներ, ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,Զեկուցումների դրույթներ(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս.Աբրահամյանին նվիրված հանրապետական գիտաժողովի),Երևան 2015թ.,էջ 49

Զաքարյան Ա.Ս.-Քննադատական մտածողության զարգացումը ինքնուրույն ընթերցանության դասերին, <<ԱրՊՀ գիտական տեղեկագիր>> ,Ստեփանակերտ1/2014,էջ28-32

Զաքարյան Ա.Ս.-Մայրենի դասագործընթացում դպրոցականների խոսքային գործունեությանը նպաստող միջոցներ,Ստեփանակերտ2014,71 էջ

Հակոբյան Կ.Ա.-Դիպլոմային բառերը Արցախի արդի մամուլում, ԱրՊՀ գիտական տեղեկագիր Ստեփանակերտ1/2014,էջ19-23

Հասարթյան Ծ.Ա. –Աշակերտի ինքնուրույն խոսքի զարգացումը միջին դպրոցի <<Մայրենի>> դասագրքերով, ԱրՊՀ գիտական տեղեկագիր Ստեփանակերտ1/2014,էջ19-23

Մարգարյան Ա.Յու.-Արցախի բանահյուսությունը, Երևան,2015թ., 760 էջ

Մարգարյան Ա.Յու.-Առած-ասացվածքները,անեծք-օրհնանքները և հանելուկները Արցախի բանահյուսության մեջ

Հայկազեան հայագիտական հանդես , Պէրոյթ 2014 թ., էջ 389-402

Մարգարյան Ա.Յու .-Ռուսերենի դերը Ղարաբաղի բարբառի հարստացման գործում,Միջազգային գիտաժողովի նյութեր,Սանկտ Պետերբուրգ, 2015թ.

Հայ գրականության և լրագրության ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Ավանեսյան /Հովհաննիսյան/ Նարինե Արարատի, բ.գ.թ., դոցենտ

Պրոֆեսորադասախոսական կազմ

1. Խանյան Սոկրատ Աղալարի - բ.գ.դ., պրոֆեսոր
2. Աթայան Անահիտ Միքայելի - բ.գ.թ., պրոֆեսոր
3. Գրիգորյան Լենա Մարգսի - բ.գ.թ., պրոֆեսոր
4. Մուսայելյան Հովիկ Գաստելյոյի - բ.գ.դ., պրոֆեսոր
5. Խաչատրյան Սիլվա Եղիշեի - բ.գ.թ., դոցենտ
6. Բալայան Զինաիդա Վանիի - բ.գ.թ., դոցենտ
7. Բաղդասարյան Սիրուն Սարուսանի - բ.գ.թ., դոցենտ
8. Առաքելյան Վալյա Արտաշեսի - բ.գ.թ., ավագ դասախոս
9. Մարդյան Գոհար Սերգեյի - բ.գ.թ., ավագ դասախոս
- 10.Աբրահամյան Նարինե Վլադիմիրի - ավագ դասախոս
- 11.Լալայան Գայանե Ստեփանի - ավագ դասախոս
- 12.Աբրահամյան Օֆելյա Ներսեսի - դասախոս

Ամփոփում ամբիոնում կատարված գիտատեսական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Ամբիոնի գիտատեսական աշխատանքների հիմնական ուղղություններն են՝

1. Հայ գրականություն և նրա դասավանդման մեթոդիկա
2. Արտասահմանյան գրականություն
3. Լրագրություն

2014-2015 ուստարվա ծանրաբեռնվածությունը կազմել է 9484 ժամ, որից բաշխվել է 9484 ժամ: Ամբիոնի դասախոսները հաշվետու ժամանակահատվածում կատարել են անհատական պլանով նախատեսված ուսումնական ծանրաբեռնվածությունը, ընդունել բոլոր եզրափակիչ, առանց եզրափակիչ, ավանդական քննությունները, ստուգարքները:

Ուսումնական տարում կազմակերպվել են գիտական սեմինարներ, որտեղ տարբեր թեմաներով զեկուցումներ են ընթերցել դասախոսները:

Ամբիոնի դասախոսները հանդես են եկել միջազգային և ներքուհական գիտաժողովներում, գրական և հոբելյանական միջոցառումներում, մասնակցել ՎՊՄՀ-ի և ԵՊՀ-ի միջազգային գիտաժողովներին:

Կազմակերպվել է դասընթացային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություն, ամբիոնի հայցորդների աստիճանավորում:

Ամբիոնի ասպիրանտներն ու հայցորդները մասնակցել են նրիտասարդ գիտաշխատողների համաժողովներին, առանձին աշխատանքներ նրաշխավորվել են տպագրության:

Ուսումնական տարում ամբիոնը հրավիրել է 13 նիստ, քննարկվել են ուսումնական, գիտական, դաստիարակչական աշխատանքներին վերաբերող ընթացիկ հարցեր:

Կատարվել են համալսարանական և ներամբիոնային դասախոսումներ և դասաքննարկումներ:

Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի գործող ուսումնական պլաններում կատարվել են վերափոխություններ:

Կազմակերպվել է ամբիոնի գիտաուսումնական, գիտամեթոդական աշխատանքների, թեկնածուական ատենախոսությունների քննարկում և գրախոսում:

Համագործակցություն է հաստատվել ՀՀ մասնագետների հետ, կազմակերպվել է դասախոսություն ՀՀ-ից հրավիրված մասնագետների կողմից:

Ամբիոնի կողմից կազմակերպվել են գեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված գրական-գեղարվեստական միջոցառումներ, հայրենաճանաչողական արշավներ:

Համալրվել են մասնագիտական գրականության պահոցները:

Հրապարակվել են պատի թերթեր:

Հրատարակություններ

Դասագիրք	Մեծագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիսներ
-	-	-	-	17	-

Հրատարակությունների ցանկ

1. **Խանյան Ս.Ա.**, Հ.Թումանյանը և Վ. Շնքսալիքը, ԱրՊՀ գիտ. տեղեկագիր, 2014, էջ 40-46:
2. **Խանյան Ս.Ա.**, Գրական կամուրջներ, Աթլսագահայ բանաստեղծ Ա.Սարեցյանի գրքի առաջաբանը, 2014, էջ 3-8:
3. **Խանյան Ս.Ա.**, Պատմավեպ Արցախի ճակատագրի մասին, Ժ.Հակոբյանի «Ղարաբաղի ճակատագիրը» վեպը, Մ. Մաշտոց. լրատու, 2015թ էջ 306-315:
4. **Խանյան Ս.Ա.**, Հայոց գեղասպանության ճիշդ նոր լուսաբանմամբ, Մ.Առուստամյանի «Հայոց գեղասպանության թեման գերմանական և ավստրիական գրականության մեջ» գրքի առաջաբանը, «Դիզակ պլյուս» հրատ., 2015, էջ 3-9:
5. **Խանյան Ս.Ա.**, Արդի արձակի զարգացման միտումներն Արցախում, Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 2015, էջ 348-351:
6. **Հովհաննիսյան Ն.Ա.**, Յեղիմ սիրտը և գեղակրոնությունը, ԱրՊՀ գիտական տեղեկագիր, 2014, էջ 59-69:
7. **Հովհաննիսյան Ն.Ա.**, Արարատապաշտությունը որպես գեղագիտական դավանանք, Լրատու, 2015, էջ 122-129:
8. **Աթայան Ա.Մ.**, Գրականագիտական լուրջ ներդրում (Արտեմ Հարությունյանի պոեզիայի մասին Ս.Խանյանի «Ա. Հարությունյանի պոեզիան» գիրքը, Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու» 2015, էջ 465-470, Գրական թերթ, դեկտեմբեր-19, 2014, էջ 7:
9. **Աթայան Ա. Մ.**, Բարոյական արժեքները Լ.Հարությունյանի «Նշխարներ»-ում, ԱրՊՀ գիտական տեղեկագիր, 2015, էջ 98-102:
10. **Գրիգորյան Լ.Ս.**, Արցախի գրական ընտանիքի նախակարապետը, Արցախի պետական համալսարանի, Գիտական տեղեկագիր, 2014, պրակ-I էջ69-73:
11. **Բալայան Զ. Վ.**, 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմը Ապրես Բեկնագարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» պատմական ուսումնասիրության մեջ, ԱրՊՀ գիտական տեղեկագիր, Հասարակական գիտություններ, պրակ I, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատարակչություն, 2014, էջ 49-54, 8 էջ:
12. **Բալայան Զ.Վ.**, Բանագիտական արժեքավոր ուսումնասիրություն (քննախոսություն Ա. Սարգսյանի «Արցախյան ավանդություններ» գրքի վերաբերյալ), Հայագիտական ուսումնասիրություններ, Գիտական հոդվածների պարբերական ժողովածու, թիվ 5/2015, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատարակչություն, 2015, էջ 173-185, 13 էջ:

13. **Բալայան Զ.Վ.**, Մուրացանի «Խորհրդավոր միանձնուհու խորհուրդը», Մեսրոպ Մաշտոց համալսարան, Լրատու, Գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Երևան, «Լիմուշ» հրատարակչություն, 2015, էջ 254-261, 8 էջ:

14. **Բաղդասարյան Ս.Ս.**, Մկրտիչ Սարգսյանի պատերազմական արձակը, Երևան, Գարուն, 2014, էջ 51-56:

15. **Բաղդասարյան Ս.Ս.**, Մաշտոցյան թեման և Համո Սահյանը, ԱրՊՀ տեղեկագիր, 2014 էջ 55-58:

16. **Բաղդասարյան Ս.Ս.**, Անդրանիկ-150, «Մշակույթ» գրական գեղարվեստական մշակութային հանրամատչելի հանդես, ԼՂՀ, N 2(32) 2015, էջ 9-11:

17. **Բաղդասարյան Ս.Ս.**, Հոգևոր պատարագ գեղասպանության զոհերի հիշատակին, «Մշակույթ» գրական գեղարվեստական մշակութային հանրամատչելի հանդես, ԼՂՀ, 2015, էջ 12:

Անգլերեն լեզվի ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Պետրոսյան Ռիտա Սուրենի, մ.գ.թ., դոցենտ

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Հայրապետյան Էլնոնորա Արմենակի - մ.գ.թ., դոցենտ, դեկան
2. Պետրոսյան Դորոթեա Սամվելի - դոցենտի պաշտոնակատար
3. Հայրապետյան Արեգա Էդուարդի - ավագ դասախոսի պաշտոնակատար
4. Այվազովա Ֆյորա Ռոբերթի - ավագ դասախոսի պաշտոնակատար
5. Ամիրյան Նարինե Սեյրանի - ավագ դասախոս
6. Մելքումյան Էլմիրա Էդուարդի - ավագ դասախոսի պաշտոնակատար
7. Աղաբաբյան Կարինա Վլադիմիրի - ավագ դասախոսի պաշտոնակատար
8. Մկրտչյան Աիդա Լենտրուշի - ավագ դասախոսի պաշտոնակատար
9. Մինասյան Նարինե Ստանիսլավի - ավագ դասախոսի պաշտոնակատար
10. Հայրիկյան Նարինե Հրանտի - ավագ դասախոսի պաշտոնակատար
11. Պետրոսյան Սուսաննա Վլադիմիրի - ավագ դասախոս
12. Ղարախանյան Լիա Լենսերի - ավագ դասախոսի պաշտոնակատար
13. Գրիգորյան Գայանե Բորիսի - դասախոսի պաշտոնակատար
14. Պողոսյան Սվետլանա Բորիսի - դասախոսի պաշտոնակատար
15. Սարգսյան Կարինե Գերասիմի - դասախոսի պաշտոնակատար
16. Հարությունյան Քրիստինե Վլադիմիրի - ավագ դասախոս
17. Գաբրիելյան Վարդուհի Գրիգորի - ավագ դասախոս
18. Դուրասանյան Նարինե Վաչագանի - մ.գ.թ., ավագ դասախոս
19. Հարությունյան Անուշ Մաքսիմի - մ.գ.թ., ավագ դասախոս
20. Վանյան Լուսինե Վասիլի - ասիստենտի պաշտոնակատար
21. Միրզոյան Իրենա Սերգեյի - դասախոսի պաշտոնակատար

Ամփոփում ամբիոնում կատարված աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Անգլերեն լեզվի ամբիոնի մեթոդական աշխատանքն ուղղված է ԱրՊՀ լեզվական և ոչ լեզվական ֆակուլտետների ուսանողների մասնագիտական պատրաստվածությանը: Այն իրականացվում է տարաբնույթ համակցված դասընթացների ձևով, որոնց ծրագրերը մշակվել են ամբիոնի դասախոսների կողմից: Ուսուցման ձևերը ընդգրկում են մանկավարժական ստեղծագործական մտքի ամբողջությունը՝ հաղորդակցական խմբային, անհատական ստեղծագործական աշխատանք, տեղեկությունների հավաքում, մշակում, քննարկում և այլն:

Ամբիոնում պարբերաբար կազմակերպվում են գիտական և գիտամեթոդական սեմինարներ:

Ամբիոնի գիտական աշխատանքների հիմնական ուղղություններն են՝

1. Անգլերեն լեզվի հիմնահարցեր
2. Անգլերեն լեզվի դասավանդման մեթոդիկայի և խոսքի զարգացման հարցեր կրեդիտային համակարգի շրջանակներում
3. Կրեդիտային համակարգի միջոցով լեզվի և խոսքի մշակույթի ուսուցման հարցեր ոչ մասնագիտական խմբերում:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումները

Ամբիոնում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյակին և Սուրբ Զատիկին:

Անգլերեն լեզվի ամբիոնի դասախոսները մասնակցել են ԱրՊՀ, Միջբուհային գիտաժողովներին՝ նվիրված ԱրՊՀ 45-ամյակին, հողվածներով հանդես են եկել 15 դասախոսներ:

Ամբիոնի ասպիրանտ Էդիտա Սերժիկի Կարապետյանի «Հաղորդակցական հմտությունների թեստային ստուգման խնդիրը ավագ դպրոցում անգլերեն ուսուցման գործընթացում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը քննարկվել և երաշխավորվել է պաշտպանության:

Ամբիոնին կից գործում է Անգլերեն լեզվի կենտրոնը: Կենտրոնը համագործում է ուսանողների հետ, պարբերաբար կազմակերպվում են տարբեր միջոցառումներ անգլերեն լեզվով:

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

- կազմակերպել, ձևակերպել և ամփոփել բակալավրիատի անվճար-վճարովի համակարգում ուսանողների փոխատեղման (ռոտացիա) անցկացման, ուսման վարձի գեղչման գործընթացը,
- նախապատրաստել ԱրՊՀ ընթացիկ և տարեկան հաշվետվությունների համար տվյալները,
- նախապատրաստել ներքին օգտագործման, կրթության, գիտության և սպորտի նախարարության, այլ պետական մարմինների համար ուսումնական գործընթացին վերաբերող տեղեկատվա-վիճակագրական տվյալներ,
- ստեղծել և պահպանել ուսանողների տվյալների բազան,
- վերահսկել ուսումնական պլանների, դասընթացներին ուսանողների գրանցման, ուսման առաջադիմության տվյալների ավտոմատացված մուտքագրման ու մշակման, ստուգարքային և քննական տեղեկագրերի ու դիպլոմների հավելվածների պատրաստման միասնական էլեկտրոնային համակարգով գործընթացը,
- վերահսկել բակալավրիատի քննաշրջանի սահմանված կարգով իրականացման ողջ գործընթացը

2014-2015 ուսումնական տարվա ընթացքում ուսումնամեթոդական բաժինը իրականացրել է հետևյալ աշխատանքները.

- Հաշվետու ժամանակաշրջանում բաժինն առաջնորդվել է գիտխորհրդի կողմից հաստատված ուսումնական գործընթացի կազմակերպման հրամանի ժամանակացույցով,
- Իրականացվել է բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի, ինչպես նաև ակադեմիական արձակուրդից վերադարձած և վերականգնված ուսանողների և ԱրՊՀ-ի միջև ուսումնական կազմակերպման պայմանագրերի կնքվող գործընթացը,

- Վերանայվել են առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրիատի ուսումնական պլանները,
- Յուրաքանչյուր կիսամյակում վերահսկվել է ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածությունների կատարումը
- Քննաշրջանի արդյունքների հիման վրա կատարվել է փոխատեղման գործընթացը,
- Ընթացիկ տարում իրականացվել է ԱրՊՀ ուսանողական նպաստների, պետական կրթաթոշակների, դրամական փոխհատուցման հատկացման գործընթացը: Դրամական փոխհատուցում է տրվել 312 ուսանողների: Համակարգի փոփոխման են ենթարկվել 85 ուսանող
- ԼՂՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին նպաստ է տրվել 548 ուսանողների, հավաքագրվել են համապատասխան ֆաստաթղթեր
- Բացի կրթաթոշակներից, բարձր առաջադիմություն ցուցաբերած 10 ուսանողի տրամադրվել է նախագահական կրթաթոշակ
- Հաշվետու տարում բուհի վճարովի համակարգում սովորող 176 ուսանողներին հատկացվել են ուսման վարձի զեղչ
- Ուսումնամեթոդական բաժնի կողմից կազմակերպվել և իրականացվել է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների գործնեությունը: ԿԳ և սպորտի նախարարություն են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:
- 2014-2015 ուսումնական տարում պատրաստվել և շրջանավարտներին են հանձնվել 343 դիպլոմ, որոնցից 91՝ առկա ուսուցման համակարգի, 227 հեռակա ուսուցման համակարգի, նախորդ տարիների 25 շրջանավարտների: Գերազանցության դիպլոմ տրվել է 4 շրջանավարտի : Տրվել են 11 դիպլոմի կրկնօրինակներ
- Հաշվարկվել և վերահսկվել է ուսանողական շարժը: Ձևակերպվել են ԼՂՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, գործուղման, հիվանդության պատճառով ակադեմիական արձակուրդի, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ 441 հրամաններ,
- Հաշվետու տարում ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն և ԼՂՀ ԿԳ և սպորտի նախարարություն են ներկայացվել Ձև N 3-զմ՝ վիճակագրական և այլ հաշվետվություններ:
- Ուսումնամեթոդական բաժնի կողմից վերահսկվել են դեկանատներում քննական և ստուգաբային ամփոփագրերը՝ ի հայտ բերել անճշտությունները և խախտումները, ստուգվել են ուսումնական մատյաններում ուսանողների կողմից հաճախումները, ուսումնական ծանրաբեռնվածության կատարումը դասախոսների կողմից:
- Պարբերաբար նախագգուշական աշխատանքներ են տարվել ակադեմիական արձակուրդից ուսանողների կողմից ժամանակին վերադառնալու և ուսանողական խմբերին կցված ուսանողների առարկայական պարտքերի հանձնման վերաբերյալ:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

պետ՝ Հասմիկ Ջումշուդի Մինասյան, կ.գ.թ., դոցենտ

Համալսարանական կրթության որակի ապահովման և միջազգային համագործակցության (այսուհետ՝ ՀԿՈԱՄՀ) բաժինը իրականացնում է ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման ծրագրի և ներբուհական դասախոսումների կազմակերպումը, համակարգչային եղանակով 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողների գիտելիքների ստուգումը և միջին որակական գնահատականի (ՄՈԳ-ի) վերահսկումը, ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյահոգեբանական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցումները,

ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների և գրագողության նկատմամբ համակարգչային ծրագրերի միջոցով վերահսկողությունը:

2014/2015 ուստարում կազմակերպվել է <<Անգլերենը ակադեմիական միջավայրում>>(1-ին և 3-րդ մակարդակներ), <<Լսարանային ցուցադրումների պատրաստում>> դասընթացները, որին մասնակցել են շուրջ 26 դասախոս:

Տվյալ ծրագրի շրջանակներում ՀԿՈԱՄՀ բաժինը կատարում է հայտերի ընդունում, գրանցում, որակավորման դասընթացներին մասնակցող դասախոսների խմբերի կազմավորում, դասընթացների կազմակերպում և վերահսկում, դասախոսների անձնական գործերի ստեղծում, տարվա կտրվածքով հաշվետվություն դասախոսների կողմից հավաքած կրեդիտների (հանձնած դասընթացների, տպագրված աշխատությունների՝ գիտական հոդվածների, ուս.-մեթ. ձեռնարկների, մասնակցությունը գիտաժողովների և այլն):

2014-15 ուստարվանից իրականացվում են ներբուհական դասալսումներ, որոնք նպաստում են ուսումնական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Դասալսումների արձանագրությունները ամփոփված կարգով քննարկվել և կրկնօրինակները /թվով 94/ փոխանցվել են ամբիոններին:

ՀԿՈԱՄՀ բաժինին կից գործում են <<Գիտելիքների ստուգման կենտրոն № 1>> և <<Գիտելիքների ստուգման կենտրոն № 2>>, որոնք կահավորված են 80 համակարգիչներով:

Նշված ուսումնական տարում կենտրոնի կողմից կազմակերպվել է բոլոր ֆակուլտետների 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերի ուսումնական պլաններով նախատեսված եզրափակիչ գնահատման, ավանդական քննությունների և դրանց լուծարքների հանձնումը համակարգչային եղանակով՝ մոտ 14.725 ուսանող-քննություն (միջանկյալ, ավանդական, լուծարք):

Հաշվետու ուստարում բաժինը իրականացրել է բոլոր ֆակուլտետների բակալավրիատի՝ մոտ 1200 ուսանողների (տարվա կտրվածքով), շրջանավարտների՝ 92 (4 տարվա կտրվածքով) և մագիստրանտների՝ թվով 213 ՄՈԳ-երի վերահսկողություն:

Քանի որ ՀԿՈԱՄՀ բաժինը իրականացնում է ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների վերնագրերի և գրագողության նկատմամբ համակարգչային ծրագրերի միջոցով վերահսկողություն, 2013 ստեղծվել է բազա, որն ամեն տարի կհամալրվի և թույլ կտա տարեց տարի լիարժեք կատարել բաժնի առջև դրված խնդիրը: 2014-2015 ուստարում ստուգվել է 214 առկա և հեռակա բաժինների 214 մագիստրոսական և 92 առկա բաժնի բակալավրիատի աշխատանքներ: Համապատասխան եզրակացությունները ուղարկվել են ամբիոններ: Այժմ բազան համալրված է 904 աշխատանքներով:

Կատարվել է նաև պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյահոգեբանական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցում բոլոր ֆակուլտետների ուսանողների հետ (մոտ 820): Սոցիոլոգիական հարցումների արդյունքները (234 դասախոսի և 8 ֆակուլտետների դեկանատների հաշվով) մտցվել են տվյալների բազա և մշակվել են համապատասխան համակարգչային ծրագրի միջոցով:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի վարիչ՝ Նարինե Վարդանյան

2014-2015թթ. ուս տարում կատարած աշխատանքների վերաբերյալ

1. Նոյեմբերի 22-ին Կենտրոնի հրավերով պատմության բաժնի 2-րդ, 3-րդ և մագիստրատուրա 1-ին, 2-րդ կուրսերի ուսանողների համար Հայոց մեծ եղեռնը թեմայով դասախոսությամբ հանդես է եկել ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանը:

2. Միացել ենք ՀՀ Սփյուռքի նախարարության „Հայոց ցեղասպանության հետևանքով միլիոնավոր մանուկներ լույս աշխարհ չեկան“, նախաձեռնությանը, որին մասնակցել են ԱրՊՀ դասախոսները և ուսանողները, Ստեփանակերտի N 1,2,3,7,10,11 և Դրախտիկ, Ազոխ, Նոր Թաղլար գյուղերի դպրոցները:

3. Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակի կապակցությամբ փետրվարի 25-ին կազմակերպվել է Օզանյանական ընթերցումներ, որին մասնակցել են հայագիտական ուղղվածություն ունեցող ամբիոնների դասախոսներն ու ուսանողները:

4. Նկարների և գրքերի ցուցահանդես՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյակին:

5. Կլոր սեղան՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի 100-ամյակին/դասախոսների և ուսանողների մասնակցությամբ/:

6. „Հայոց ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն,“- միջազգային գիտաժողով 10-12ապրիլի 2015թ.:

7. Մայիսի 7-ին Եռատոնին նվիրված ուսանողական գիտաժողով /պատմության և քաղաքագիտության ֆակուլտետի ուսանողների մասնակցությամբ/:

8. Հայագիտական կենտրոնը համագործակցում է ԵՂՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հետ, նյութեր է տեղադրում „Հայագգ“, ինֆո-ի Արցախի բաժնում:

9. Կնքվել է համագործակցության պայմանագրեր.

ա.Արցախի բարբառի և ազգագրության ուսումնասիրման կենտրոնի հետ, որի արդյունքում ձեռք ենք բերել բազմաթիվ նյութեր էլեկտրոնային տարբերակով: Բ.Շուշիի „Կաճառ գիտական կենտրոն“, հասարակական կազմակերպության հետ:

10.ՀՀ Սփյուռքի նախարարությունից ձեռք ենք բերել Հայոց ցեղասպանությանը նվիրված նոր գրականություն:

11.Կենտրոնը համալրվել է արխիվային նյութերով:ԼՂՀ պետական արխիվից ձեռք է բերվել ավելի քան 90 արխիվային փաստաթուղթ:

12.Կենտրոնում գործում է հայագիտական ուղղվածություն ունեցող էլեկտրոնային գրադարանը, ունենք քարտարան, որի աշխատանքը կրում է շարունակական բնույթ:

13.Հայագիտական կենտրոնի գրադարանային ֆոնդը համալրվել է 204 կտոր գրականությամբ, որից 107-ը՝ հայերեն, 20-ը՝ ռուսերեն, 11-ը՝ անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով, 66-ը՝ ամսագիր:

Կենտրոնի հաճախումների թիվը կազմում է 1265 ընթերցող, որից ուսանողներ՝ 1117, դասախոսներ՝ 99-ը, այլ բուհերից, շրջաններից՝ 49 ընթերցող:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի վարիչ՝ Անահիտ Արամայիսի Աղապյան

2015 թ. սեպտեմբերից համակարգչային կենտրոնում համակարգիչների թիվը ավելացվել են և ընդհանուր թիվը կազմել է 15 համակարգիչ: Երկրորդ մասնաշենքի (լսարան 23) համակարգչային կենտրոնը ապահովում է բանասիրական, մանկավարժության և սպորտի, բնագիտական, պատմության և իրավագիտության ֆակուլտետների բակալավրիատի, ինչպես նաև մագիստրատուրայի՝ պատմություն, իրավագիտություն, ռուսաց լեզու, օտար լեզու ինչպես նաև ասպիրանտների և հայցորդների պարապմունքները:

Բոլոր կենտրոններում տեղադրված են թարգմանչական ծրագրեր , որոնցից օգտվում են և՛ ուսանողները , և՛ դասախոսները:

Կենտրոնների միջև գործում է ներքին ցանցը, որն ապահովում և հեշտացնում է աշխատանքի կազմակերպման բարձր մակարդակը:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի վարիչ՝ Մ.Զ.Ավանեսյան

Մ.Զուլհաճեանի անվան կենտրոնը ապահովում է բնագիտական, քիմկենսաբանական, տնտեսագիտության և ճարտարագիտության, մանկավարժություն և սպորտ ֆակուլտետների և դրանց համապատասխան մագիստրատուրայի ուսումնական պրոցեսները:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում ամբիոնի ծանրաբեռնվածության համաձայն կազմվում են դասընթացների գրաֆիկ՝ բացառելով համընկումները:

Ամեն մի առարկայի համար ապահովվել են ծրագրային փաթեթներ: Տարվա ընթացքում հետևվում են համակարգիչների անսարքության վերացմանը: «Համակարգիչից օգտվելու հմտություններ» առարկայի համար կազմվել են լաբորատոր աշխատանքներ, որից օգտվում են նաև այդ առարկան դասավանդող դասախոսները:

Կատարվում են լաբորատոր աշխատանքների թարմացումներ և անհրաժեշտության դեպքում լաբորատոր աշխատանքների ժամանակ օգնում են ուսանողներին: Հնարավորության սահմաններում, հիմնականում երկրորդ կիսամյակում կուրսային և ավարտական աշխատանքների կատարման ժամանակ և ինքնուրույն աշխատանքների համար ուսանողներին տրամադրում են լրացուցիչ պարապմունքների գրաֆիկ:

Ամեն տարի ոչ մասնագետ դասախոսների հետ անց են կացվում խորհրդատվություններ համակարգչային գիտելիքների վերաբերյալ: Պատասխանատվություն են կրում համակարգչային տեխնիկայի ճիշտ օգտագործման և պահպանման համար: Կենտրոնը ապահովում է ուսումնական պրոցեսին անհրաժեշտ սարքավորումներով /պրոյեկտոր, տեսախցիկ/:

Պարապմունքների ժամանակ ի հայտ եկած ծրագրային և տեխնիկական անսարքությունները գրանցում են և ժամանակին կատարում դրանց վերացումը:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ **ակադեմիկ Ա.Գ.Աղանբեգյանի անվան**

Կենտրոնի վարիչ՝ Օֆելյա Հայրապետյան

Ա.Գ.Աղանբեգյանի անվան համակարգչային կենտրոնում անցկացվում են ինֆորմատիկայի բոլոր մեծ խմբերի գործնական և լաբորատոր պարապմունքները ամբողջ համալսարանի մակարդակով, քանի որ այն համալրված է 25 հատ P-IV մակնիշի համակարգիչներով:

1. Ըստ յուրաքանչյուր առարկայի համակարգիչներում ապահովվում են համապատասխան ծրագրային փաթեթների առկայությունը՝ գրասենյակային ծրագրեր (Word, Excel,...), մաթեմատիկական փաթեթների ծրագրեր (Matlab, MatCad, ...), ծրագրավորման լեզուների ծրագրային համակարգեր (Pascal, C++ և այլն):

2. Ամիսը մեկ անգամ անցկացվում են համակարգիչների պրոֆիլակտիկ ստուգումներ՝ կոշտ սկավառակի մաքրում ուսանողների կողմից ստեղծված ոչ պիտանի ֆայլերից, անհրաժեշտության դեպքում ապահովվում են շարքից դուրս եկած սարքերի փոփոխությունը:

3. Հնարավորության սահմաններում (երբ կենտրոնը ազատ է պարապմունքներից) ուսանողներին տրամադրվում են լրացուցիչ ժամեր կուրսային, ավարտական և ինքնուրույն աշխատանքներ կատարելու համար: Դա հնարավոր է հատկապես երկրորդ կիսամյակում: Անհրաժեշտության դեպքում ուսանողներին աջակցվում է առաջացած հարցերի լուծման ժամանակ:

4. Հաշվի առնելով դասախոսների դիտողություններն ու պահանջները, կազմակերպվում են առաջացած անհարմարությունների վերացումը:

5. Գրանցվում են ինչպես տեխնիկայի, այնպես էլ ծրագրային անսարքությունները, հետազայում դրանք վերացնելու համար:

6. Մշակվել են լաբորատոր աշխատանքներ օֆիսային փաթեթների համար (Word, Excel):

7. Կենտրոնում պահպանվում է գրադարանից վերցված ինֆորմատիկայի վերաբերվող գրականությունը և ամսագրերը, որոնք օգտագործվում են դասախոսների և ուսանողների կողմից:

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանի վարիչ՝ Լ.Ե. Առստամյան

Արցախի պետական համալսարանի գրադարանը համալսարանի առաջատար ստորաբաժանումներից է, որն ուսումնական և գիտական գործընթացներն ապահովում է գրականությամբ և տեղեկատվությամբ, ընդառաջում է բարձրացնել ընթերցողների գիտական մակարդակը՝ ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական, բազմաբնույթ ու բազմաբովանդակ հարցերում: Գրադարանն աշխատում է բուհին համապատասխան կանոնադրությամբ և աշխատանքային պլանով:

Գրադարանի կառուցվածքի մեջ մտնում են հետևյալ բաժինները.

- Համալրում, մշակում, գրացուցակավորում, հաշվառում և բաշխում
- Սպասարկում և գրականության պահպանում
- Մատենագիտական սպասարկում
- Համակարգչային տեղեկատվություն
- Էլեկտրոնային և համացանցային սպասարկում

Գրադարանը ըստ կարգային բաժանումների, կախված ուսանողների թվից ու գրքային ունեցվածքի քանակից, դասվում է հինգերորդ կարգում:

Գրքային ֆոնդերի նպատակային համալրումը պահանջում է լայնածավալ և հետևողական աշխատանք: Այս ոլորտում առաջնայինը ուսումնական գործընթացի և համալսարանի գիտական կյանքի հետ մշտական կապի ապահովումն է: Հաշվետու 2014-2015 ուսումնական տարվա ընթացքում գրադարանի գրքային ֆոնդերը համալրվել են 2.839 միավոր գրականությամբ, որից 2.294 միավորը գույք գրքեր է, 545 միավորը բրոշյուրներու տեղական բաժանորդագրությունից ստացված թերթերի և ամսագրերի կոմպլեկտներ, որի ընդհանուր արժեքը կազմում է 11.112.317 դրամ: Համալրված գրականության 1.276 միավորը հայերեն է, 239-ը ռուսերեն, 779-ը օտար լեզուներով, որը ժամանակին մշակվել, գրացուցակավորվել, հաշվառվել և բաշխվել է համապատասխան ստորաբաժանումներ: Համալրված գրականության 172 միավորը՝ 525.935 դրամ արժողությամբ դրամական փոխանցումով է ձեռքբերված, 2313 միավորը՝ 10.586.382 դրամ արժողությամբ՝ նվիրատվությամբ: Համալրման աշխատանքների մի մասն էլ կազմում է բաժանորդագրությունը: Նշված ժամանակահատվածում գրադարանը բաժանորդագրվել է 23 անուն 873.440 դրամ արժողությամբ թերթեր և ամսագրեր:

Գրադարանային ֆոնդերը համալրվել են հիմնականում նվիրատվությամբ. նվիրատվություններ են արել ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը, ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ԼՂՀ ազգային ժողովը, Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների Գ.Մելիքյանի անվան օգնության ֆոնդը, Երևանի պետական տնտեսագիտական համալսարանը, ՀՀ ԲՈՒՀ-ի նախագահ Լ.Արզումանյանը, Երևանի ճարտարագիտական պետական համալսարանը և ԱրՊՀ հրատարակչությունը:

Ընդհանուր գրքային ունեցվածքը կազմում է 103.309 միավոր, որից 94.456 միավորը գույք գրքեր են, այդ թվում. հայերեն՝ 43.180, ռուսերեն՝ 45.759, օտար լեզվ.՝ 5.517: Գրադարանում գործում են հինգ լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն, երկու տեսակի՝ այբբենական և կարգային /սխառնատիկ / գրացուցակներ, որոնք անընդհատ համալրվում են նոր ստացած գրքերի գրացուցակներով:

Ընթերցողների կազմը. ընդհանուր ընթերցողների թիվը կազմում է 2.557, որից ուսանողներ՝ 1997, պրոֆեսորադասախոսներ՝ 210, աշխատողներ՝ 190, մագիստրանտներ 105, ասպիրանտներ՝ 11 այլ ու՝ 44:

Տեղեկատվություն հսկիչ ցուցանիշների.

Ընդհանուր հաճախումների թիվը	126.832
Տացքի է տրված	131.608 գիրք
Միջին հաճախումը	49
Միջին ընթերցանությունը	51
Միջին շրջանառությունը	1.2

Գրադարանային աշխատանքներում զգալիորեն բարձրացել է սպասարկման մակարդակը՝ կապված ֆոնդերի անընդհատ վերակառուցման և վերադասավորման ճիշտ կազմակերպված գործընթացի հետ: Գործում է երեք ընթերցասրահ, որտեղ ընթերցողներին են տրամադրվում գրադարանում եղած գրքերի մեկական օրինակները և բաժանորդագրությունից ստացած

թերթերն ու ամսագրերը: Բոլոր ամբիոններին և նրանց կից կաբինետներին է տրամադրված համապատասխան գրականություն, այդ թվում նաև հայագիտական կենտրոնին: Հաշվետու շրջանում հայագիտական կենտրոնին հատկացվել է 71 միավոր գիրք: Համալսարանի կառուցվածքային փոփոխությունների հետ կապված, կազմակերպվել է մի քանի ամբիոններին հատկացված գրականության հաշվառումը և նոր ակտավորումը:

Տեղեկատվական բաժինը իր լիարժեք գործունեությամբ արագացնում է գրադարանի ներքին աշխատանքները:

Բարձր մակարդակով գործում է էլեկտրոնային գրադարանը, որտեղ մուտքագրված են մոտ 40.000 միավոր գրքեր: Հաշվետու ուստարում էլեկտրոնային գրադարանից օգտվել են 1.278 ընթերցող: Բացի մուտքագրված գրականությունից ընթերցողները հնարավորություն ունեն օգտվել համացանցից:

Մշտական գործում են հոբելյանական տարելիցների և նոր ստացած գրականության ցուցադրական ստենդերը: Ընթացիկ ուսումնական տարում կազմակերպվել են <<Գրական ընթերցումներ>> խորագրով ընթերցողական երեկոներ՝ նվիրված <<Ս.Խանյանի 85-ամյակին>>, <<Հայոց ցեղասպանության 100-ամյակին>>: Կազմվել է <<Հայոց ցեղասպանության 100-ամյակին>> նվիրված ստենդ, գրքեր ցուցահանդես, մատենագիտական հանձնարարական ցուցակներ՝ 25 էջի վրա:

Ընթերցողներին մեծ օգնություն են ցույց տալիս լրացուցիչ ստեղծված <<Նրա մասին>>, <<ԱրՊՀ դասախոսների աշխատությունների>> և <<Գիտական տեղեկագրերի հոդվածների>> քարտարանները և համակարգչային քարտագրումը, որը օգնում է մատենագիտական թեմատիկ որոնումներին և սպասարկմանը:

ԱՐՊՀ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Արհկոմիտեի նախագահ՝ Ա. Բարսեղյան

ԱրՊՀ աշխատողների արհեստակցական կազմակերպությունը 2015թ. հաշվետու ժամանակաշրջանում համաձայն արհմիության ընդհանուր ժողովում հաստատված ծրագրի օգնության ֆոնդը հասցրեց 2,000,000/երկու միլիոն/ դրամի 1,000,000 /մեկ միլիոն/ դրամի դիմաց, ինչը նշանակալից դեր ունեցավ աշխատավորների համար: 2015թ. 50 տոկոսով կրճատվեցին արհմիության նախագահի և հաշվապահի աշխատավարձը, որի շնորհիվ ավելացվեց աշխատողներին տրվող օգնության նպաստի չափը - 50,000 /հիսուն հազար / դրամ:

ԱրՊՀ արհկոմիտեն 13 անդամները առավել ուշադրությամբ հետևում էին համալսարանի 500 աշխատողներին հուզող հարցերին: 2015թ. օգնության նպաստը ի տարբերություն նախորդ տարիների տրվել է հաշվի առնելով համալսարանի 24 ամբիոնների և դեկանատների խորհուրդների առաջարկությունները, որը քննարկվել է կոմիտեի նիստում՝ հաստատվել և նոր միայն հանձնվել աշխատողներին:

2015 թ. այդ նպատակների համար արհկոմիտեն իր ֆինանսական միջոցներից ծախսել է 2,165,000/ երկու միլիոն հարյուր վաթսուհինգ հազար / դրամ:

Աշխատողների առողջարանային ուղեգրերի ձեռք բերման համար ծախսվել է 780,000 /յոթ հարյուր ութսուն հազար / դրամ, աշխատողներից 25 հոգի իրենց հանգիստն են անցկացրել “Ջերմուկ” և “Արզնի” առողջարաններում, յուրաքանչյուր աշխատողի տրվել է ուղեգրի 4 օրվա արժեքը, որը կազմել է 56,000/հիսունվեց/ հազար դրամ:

Էքսկուրսիաներ են կազմակերպվել համալսարանի ընդհանուր բաժնի, ուսումնական մասի, արհկոմիտեի անդամների համար հանրապետության պատմամշակութային վայրեր՝ Դաղի վանք, Տիգրանակերտ, Շուշի, որի համար ծախսվել է 50,000 /հիսուն հազար / դրամ:

2014 թ. հաշվետու ժամանակաշրջանում նշվել է համալսարանի աշխատողների 26 հոգու հոբելյանը, որի համար ծախսվել է 230,000 /երկու հարյուր երեսուն հազար / դրամ:

Մարտի 8-ի առիթով շնորհավորել ենք համալսարանի արհմիության կանանց անհատական նվերներով, որի համար ծախսվել է 435,000/չորս հարյուր հազար / դրամ:

Արհկոմիտեն 2015 թ. իրականացրել է մայիսի 9-ի եռատոնին նվիրված միջոցառումներ՝ դրամական օգնություն ցույց տրվել Արցախի գոյամարտում զոհված ազատամարտիկների

մայրերի, համալսարանում աշխատող կորած ազատամարտիկի մոր, գոյամարտում զոհված ազատամարտիկների հարազատներին՝ թվով 29 հոգու , Արցախյան պատերազմի II և III կարգի հաշմանդամներին՝ թվով 11 հոգի: Այդ նպատակի համար արհկոմիտեն իր ֆինանսական միջոցներից ծախսել է 400, 000 /չորս հարյուր հազար/ դրամ:

Մարտի 8-ի կապակցությամբ ծախսվել է 435,000/չորս հարյուր երեսունհինգ հազար/ դրամ:

Նոր տարվա կապակցությամբ ծախսվել է 410,000/ձորս հարյուր տաս հազար/դրամ:

Արհկոմիտեն 2013 թ. լուրջ ուշադրություն է դարձրել միջոցառումների գեղարվեստական մակարդակը բարձր հիմքերի վրա պահելու հարցը:

Արհկոմիտեի կողմից կատարած աշխատանքի ոչ լրիվ թվարկումից հետո նշենք, որ անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել աշխատողների սոցիալական պրոբլեմների վրա ու աշխատանքի կազմակերպչական կողմին , ինչ կօգնի արհմիության աշխատանքների ավելի լայն ծավալման գործընթացին:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եկամուտներ

Հազ. դրամ

		2007թ.	Ընդ.փաստ
		պլան	
1	Տարեսկզբի մնացորդը		55.0
2	Արհ. անդամավճարներ		24008.7
3	Եկամուտ մնացորդով		24063.7

Ծախսեր

		2007թ.	Ընդ.փաստ
		պլան	
1	Աշխ.սոց. տնտ. հարցեր		180.0
2	Նյութական օգնություն		3192.2
3	Հաշվարկներ բյուջեյի հետ		355.6
4	Կուլտ մասայական ծախսեր		3685.1
5	Աշխատավարձ		4964.1
6	Գործուղում		442.5
7	Կենսաթոշակային ֆոնդ		1140.7
8	Ֆիզկ. և սպորտ		196.4
9	Բ ու ժ մ ա ն ուղեգր.		4721.4
10	Այլ ծախսեր		646.4
11	Արհմ. թերթի բաժան.		420.0
12	ԱՐՀՄ. ֆեդերաց. մասհան.		3311.9
13	Արհմ.ակտ.պարգևատր.		300.0
14	հիվ.թերթիկ		0.0
15	Արհմ.անդ..պարգևատր.		335.7
16	Տնտեսական ծախսեր		81.8
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		23973.9
	Բյուջետային մնացորդ.		

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եկամուտներ

Հազ. դրամ

		2015թ.	2015թ
		պլան	փաստ
1	Տարեսկզբի մնացորդը		238.5
2	Արհ. անդամավճարներ		6515.1
3	Եկամուտ մնացորդով		6753.6

Ծախսեր

		2015թ.	2015թ
		պլան	փաստ
1	Կուլտ. մասայական ծախսեր		845.6
2	Էքսկուրսիաների կազմ.		50
3	Նյութական օգնություն		2165
4	.Բուժման ուղեգրեր		780
5	Աշխատավարձ		1639.9
6	Գործուղում		
7	Աշխ. սոց. տնտ. հարցեր (հուշ. կառ. համ. օգնութ.)		
8	Օգնություն (ծնունդներ)		230
9	Արհմ. ակտ. օգնություն		
10	Ֆիզկուլտուրա և սպորտ		180
11	Այլ ծախսեր		57.7
12	Արհմիութ. թերթի բաժանորդ.		128
13	Տնտեսական ծախսեր		13
14	ԼՂՀ Արհմիությունների ֆնդերացիայի մասհանում		651.3
	Ընդամենը		6740.5
	Բյուջետային մնացորդ.		13.1

2014-2015թթ. ուս տարում հրատարակչության բաժնի կողմից հրատարակված գրքերի ցանկ

Հրատարակչության բաժնի պետ՝ Եղիշե Առուշանյան

2014-2015 ուս.տարում հրատարակչությունը ապահովել է բոլոր տեսակի դասամատյանների, արձանագրությունների մատյանների, համալսարանի աշխատանքները բնականոն կազմակերպելու համար անհրաժեշտ տոմսերի, թնստերի, բլանկների տպագրությունն ու պատճենահանումը:

Հրատարակչությունը կատարում է դիպլոմային, ավարտական, կուրսային աշխատանքների ձևավորման և տպագրման, ինչպես նաև գունավոր տպագրության և լամինատման աշխատանքներ: Պարբերաբար լույս է տեսնում «Արցախի համալսարան» թերթը, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր» (Բնական գիտություններ) և «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր» (Հասարակական գիտություններ) պարբերականները, «Հայագիտական ուսումնասիրություններ» հոդվածների ժողովածուի հերթական պրակը:

1	Ս.Նանագյուլյան, Գ.Մարգարյան	ԼՂՀ ժանգասնկերը	8,75 մամուլ	Կենս.ամբիոն
2	Ի.Բաղդասարյան	Բեռնոններ	3 մամուլ	Քաղաքաշին. ամբիոն
3	Ա.Պետրոսյան	Ծրագիր:Նոր պատմություն,եվրոպայի և Ամերիկայի երկրներ	3մամուլ	Պատմ. ամբիոն
4	Ռ.Բալայան	Կովկասում Ռուսաստանի մղած պատերազմները և հայ կամավորական շարժումները 19- րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդում	2մամուլ	Պատմ. ամբիոն
5	Ս.Մինասյան	Հովհաննես Շիրազ	52 մամուլ	Հ.լեզվի և գրակ. ամբիոն
6	Ռ.Մանգասարյան	Տնտեսագիտության տեսություն մաս 1	10,5մամուլ	Տնտ. Տես. և կառ. ամբիոն
7	Ռ.Մանգասարյան	Տնտեսագիտության տեսություն մաս 2	4,5մամուլ	Տնտ. Տես. և կառ. ամբիոն
8	Գիտական տեղեկագիր	Հասարակական գիտություններ	31,5 մամուլ	
9	Գիտական տեղեկագիր	Բնական գիտություններ	18,25 մամուլ	
10	Հայագիտական ուսումնասիրություն- ներ		12մամուլ	
11	Հաշվետվություն		15,25	
	Ընդհամենը՝ 160.75մամուլ			

Հրատարակչությունը մատուցում է նաև վճարովի ծառայություններ:

ՈւՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Վարիչ՝ Նարինե Վլադիմիրի Աբրահամյան

Ուսանողների հետ տարվող աշխատանքների, հանրային կապերի և լրատվության (այսուհետև՝ ՈւՀՏԱ, ՀԿ և Լ) բաժինը գործում է 2014-2015 ուսումնական տարվանից:

Բաժինն աշխատանքներ է իրականացնում նշված 3 ուղղություններով:

Ուսանողների հետ տարվող աշխատանքներ: Հաշվետու ժամանակահատվածում բաժինն իրականացրել է ուսանողական, հասարակական և մարզամշակութային առօրյայի ակտիվացմանը, ուսանողների մտավոր, գաղափարական, հոգևոր զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր:

Այս ուղղությամբ բաժնի աշխատանքներն, ընդհանուր առմամբ, կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. ուսանողական կառույցների կարողությունների զարգացում,
2. աջակցություն համալսարանի ուսանողական կազմակերպությունների նախաձեռնություններին և ծրագրերին,
3. հանդիպում-քննարկումներ,

Ուսանողական կառույցների կարողությունների զարգացում և աջակցություն՝

- ուսանողների և ուսանողական կառույցների ղեկավարների հանդիպում ԱրՊՀ ղեկավար կազմի հետ,
- ուսանողական կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողների մասնակցության արդյունավետությունը բարձրացում,
- հանդիպումներ հասարակական, քաղաքական, գիտության, արվեստի և սպորտի հայտնի գործիչների հետ:

Աննախադեպ էր ԱրՊՀ Ուրախների և հնարամիտների ակումբի (ՈւՀԱ) կազմավորումն ու մասնակցությունը Ուսանողական լիգայի «Ձմեռային գավաթ 2015»-ին: ԱրՊՀ ՈՒՀԱ «Լոխ լյավա» թիմը պատվով հանդես եկավ Ծաղկաձորում կայացած մրցույթին՝ զբաղեցնելով 3-րդ տեղը: Թիմն արժանացել է նաև ՀՀ ՈՒՀԱ-ի ուսանողական լիգայի կազմակերպիչների կողմից հատուկ գավաթի և պատվոգրի:

Հանդիպում-քննարկումներ են կազմակերպվել ուսանողական կառույցների ներկայացուցիչների, առանձին խմբերի, անհատ ուսանողների, դասախոսների, մասնավորապես՝ առաջին կուրսեցիների կուրսղեկների հետ: Ըստ անհրաժեշտության տրամադրվել է խորհրդատվություն՝ կապված ուսանողների իրավունքների, պարտականությունների, համալսարանի կանոնակարգերի և ուսանողի հետ առնչվող այլ իրավական ակտերի վերաբերյալ: Կատարվել է ուսանողների հետ առնչվող խնդիրների վերլուծություն:

Այս առումով առանձնացնել կարելի է ԱրՊՀ մեծ դահլիճում հանրակացարանաբնակ ուսանողների հետ կազմակերպված քննարկումները, հանրակացարանաբնակ առաջին կուրսեցիների համար կազմակերպված էքսկուրսիան դեպի Արցախի պատմաերկրագիտական թանգարան, հանրակացարանաբնակների միջև անցկացված «Լավագույն սենյակ» մրցույթը՝ շաբաթօրյակի շրջանակներում և շախմատի մրցաշարը, որի մասնակիցը ՌԴ Դոնի Ռոստով քաղաքում կազմակերպված շախմատի մրցաշարում ներկայացրել է ԱրՊՀ-ն: Հաշվետու ժամանակահատվածում ընդունվել, ուսումնասիրվել և ընթացքավորվել է հանրակացարանում բնակվելու 209 դիմում:

Հանրային կապեր: Այս ուղղությամբ բաժինն իրականացրել է աշխատանքներ, որոնք ուղղված են եղել ԱրՊՀ գործունեության և նրա վարկանիշի բարձրացմանը տեղեկատվական և

քարոզչական բնույթի միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը, հանրային նշանակության տարբերակի միջոցառումների (այդ թվում՝ տոն օրերին նվիրված միջոցառումների, համաժողովների, հավաքների, երթերի) կազմակերպմանը, հանրապետության սահմաններում և դրանից դուրս գործող ուսումնական հաստատությունների հետ համագործակցային կապերի հաստատմանն ու ամրապնդմանը, համատեղ միջոցառումների կազմակերպմանը, հանրապետության երիտասարդական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցային ծրագրերի իրականացմանը: Բաժինը համագործակցում է ԼՂՀ-ում գործող տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների և անհատ լրագրողների, ինչպես նաև ԼՂՀ ԱԳՆ, ԵՊՀ, ՎՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների, հանրային կապերի և լրատվության բաժինների հետ:

ՈւՀՏՍ, ՀԿ և Լ բաժնի ուշադրության առանցքում է եղել նաև բուհ-դպրոց համագործակցությունը: Ստեփանակերտ քաղաքի հ. 8 և հ. 11 ավագ դպրոցներում կազմակերպվել են դասախոսություններ, պատրաստվել քարոզչական պաստառներ: Նույն դպրոցների աշակերտները մասնակցել են ԱրՊՀ մշակութային միջոցառումներին: Համագործակցությունը չի սահմանափակվել միայն մայրաքաղաքի դպրոցներով. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում ԱրՊՀ մի խումբ դասախոսներ և ուսանողներ դասախոսություններով հանդես են եկել հանրապետության տարբեր շրջանների դպրոցներում:

Հաշվետու ժամանակահատվածում աննախադեպ էր նաև համալսարանի աշխատակիցների մանկահասակ երեխաների համար հեքիաթային կերպարների մասնակցությամբ կազմակերպված միջոցառումը՝ նվիրված Երեխաների պաշտպանության միջազգային տոն օրվան:

Լրատվություն: Այս ուղղությամբ բաժինն իրականացրել է աշխատանքներ, որոնք նպաստել են ԱրՊՀ ինտերնետային ռեսուրսների ակտիվացմանը, պաշտոնական կայքէջի զարգացմանը, սոցիալական-տեղեկատվական ցանցերում ներկայացվածությանը, հետադարձ կապի ապահովմանը, «Արցախի համալսարան» պաշտոնաթերթի, «Քո ժամանակը» ուսանողական ամսաթերթի, ԱրՊՀ մասին պատմող տեսանյութերի, լուսանկարների և տպագրական նյութերի ստեղծմանն ու տարածմանը: Իրականացվել է տպագիր և էլեկտրոնային մամուլում ԱրՊՀ անդրադարձների դիտարկում, վերլուծություն և տեղայնացում:

ՈւՀՏՍ, ՀԿ և Լ բաժնի կատարած աշխատանքների ընդհանուր նկարագիր

Հավելված 1

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Կարող. զարգ.	Աջակց.
1.	Առաջին կուրսեցիների երդման արարողություն	1	
2.	Հանդիպումներ ՀՀ, ԼՂՀ և օտարերկրյա հասարակական, քաղաքական, մշակութային գործիչների հետ	1	15
3.	Հանդիպումներ ԱրՊՀ ղեկավարության հետ	6	
4.	Հանդիպում-քննարկումներ		
5.	Միջբուհական համագործակցություն		6
6.	Տոն օրերի/հոբելյանների նվիրված միջոցառումներ	3	16
7.	Հիշատակի օրերին նվիրված երթեր	5	5
8.	Գիտաժողովներ/փառատոներ/գիտական ընթերցումներ		11
9.	Գրքերի շնորհանդեսներ		2
10.	Բնակավայրային և մարզամշակութային մրցույթներ/մրցաշարեր	6	3
11.	Ճանաչողական էքսկուրսիաներ	1	
12.	Այցելություն գործառնաբան		1
13.	Ֆիլմի դիտում	1	1
14.	Շաբաթօրյակներ/ծառատնկման աշխատանքներ	1	1
15.	Մագիստրոսների դիպլոմների տրման հանդիսավոր արարողություն	1	

ԱրՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածում						
N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՔԱՆԱԿԸ			2013-14/2014-15	
1.	Ինտերնետային ռեսուրսների զարգացում	ԱրՊՀ պաշտոնական կայքէջի ինտերֆեյսի ձևավորում, ներքին ցանցի համակարգում			-	
2.	«Արցախի համալսարան» պաշտոնաթերթ	Տպագրված 9 համար			-	
3.	«Քո ժամանակը» ուսանողական ամսաթերթ	Տպագրված 8 համար			-	
4.	asu.am պաշտոնական կայքէջ	Ներբեռնված 172*3 տպագիր նյութ			2013-14	2014-15
					77 նյութ	172 նյութ
5.	asu.am պաշտոնական կայքէջ (հաճախելիություն)	2011	2012	2013	2014	
		2917	20269	47787	48200	
6.	ԱրՊՀ-ն Facebook-ում		172 հղում՝ համապատասխան լուսանկարներով		2013-14	2014-15
	հետևողների քանակը				0 հղում	172 հղում
	2013-14	2014-15				
	364	1860				
7.	ԱրՊՀ-ն Одноклассники-ում		56 հղում՝ համապատասխան լուսանկարներով		2013-14	2014-15
	հետևողների քանակը				-	56 հղում
	2013-14	2014-15				
	-	340				
8.	Տեսանյութեր	4 կարճամետրաժ ֆիլմ, մոտ 35 տեսանյութ, նույնքան՝ թվայնացված			-	
9.	Հեռուստատեսյան	տեղադրված մոտ 61 նյութ				
10.	Տեղեկատու գրքույկ	4			-	
10	Տեղեկատվական-գովազդային պաստառ	2			-	
11.	Պատվոգիր/շնորհակալագիր/հավաստագիր	6			-	
12.	ԱրՊՀ եռալեզու գրքույկ	1			-	
13.	ԱրՊՀ մեծ դահլիճում կազմակերպված միջոցառումներ	24				
14.	ԱրՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում կազմակերպված միջոցառումներ	23				
15.	ԱրՊՀ եղբայր համալսարանների համագործակցության կենտրոնում կազմակերպված միջոցառումներ	2				

ԱՐՊՀ ՄԵԾ ԴԱՀԼԻՃՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ			
N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԺԱՄԿԵՏԸ	ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ
1.	Արիության դաս	1.09.2014	ԼՂՀ ԱԺ նախագահ, ԼՂՀ ԿԳ փոխնախարար, համալսարանականներ
2.	«Ռազմահայրենասիրության դաս» խորագրով ֆիլմի դիտում	1.09.2014	Վ. Բաղդյան (ֆիլմի հեղինակ), համալսարանականներ
3.	«Ռազմահայրենասիրության դաս» խորագրով ֆիլմի դիտում	1.09.2014	Վ. Բաղդյան (ֆիլմի հեղինակ), համալսարանականներ
4.	«Դեֆորմացվող միջավայրերի փոխազդեցության դինամիկայի պրոբլեմները» VII միջազգային գիտաժողով	26.09.2014	ԼՂՀ ԿԳ նախարար, տարբեր երկրներից ժամանած մասնակից-գիտնականներ, համալսարանականներ
5.	Հանդիպում ԼՂՀ վարչապետ Ա. Հարությունյանի հետ	1.10.2014	ԼՂՀ ԿԳ նախարար, համալսարանականներ
6.	Հանդիպում հանրակացարանաբնակ ուսանողների հետ	1.10.2014	Պրոռեկտոր Յարամիշյան, հանրակացարանաբնակ ուսանողներ
7.	Միջոցառում՝ նվիրված տնտեսաիրավաբանական ֆակուլտետի կազմավորման 20 և տնտեսագիտության մասնագիտության 25-ամյակին	24.10.2014	ԼՂՀ վարչապետ, ԼՂՀ ԿԳ նախարար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յու. Սուվարյան, ՀՊՏՀ պատվիրակություն, համալսարանականներ
8.	Միջբուհական ուսանողական գիտաժողով	29.10.2014	ՎՊՀ պատվիրակություն, ԱրՊՀ-ականներ
9.	Միջբուհական գիտաժողով	12. 11. 2014	Գիտաժողովի մասնակիցներ, համալսարանականներ
10.	Գրական-գեղարվեստական երեկո՝ «Ռուսական խոսքի օրեր»-ի շրջանակներում	20. 11. 2014	Հյուրեր, համալսարանականներ
11.	Միջոցառում՝ նվիրված ուսանողների միջազգային օրվան	21. 11. 2014	ԼՂՀ ԿԳ նախարար և փոխնախարար, ԼՂՀ երիտասարդության հարցերի և մշակույթի փոխնախարար, ՀՕՄ-ի Արցախի միավորի ատենապետուհի, հյուրեր համալսարանականներ
12.	Ուսանողական հայագիտական կոնֆերանս՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 45 և ԵՊՀ հիմնադրման 95-ամյակներին	22. 11. 2014	ԵՊՀ պատվիրակություն, ԱրՊՀ-ականներ
13.	ԱրՊՀ հիմնադրման 45-ամյակի հանդիսավոր նիստ	28. 11. 2014	ԼՂՀ ԱԺ նախագահ, ԼՂՀ վարչապետ, ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավար, նախարարներ, պետական, քաղաքական գործիչներ, համալսարանականներ
14.	Միջոցառում՝ նվիրված ԼՂՀ սահմանադրության օրվան	10. 12. 2014	ԼՂՀ ԱԺ նախագահ, ԿԸՀ նախագահ, համալսարանականներ
15.	Միջոցառում՝ Հայոց բանակի կազմավորման 23-րդ տարեդարձին	28.01.2015	ԼՂՀ ՊԲ սպաներ, համալսարանականներ
16.	Միջոցառում՝ նվիրված մայրենիի օրվան	21.02.2015	ԼՂՀ ԿԳ նախարար և փոխնախարար, ԼՊՏ պետ, համալսարանականներ
17.	Հանդիպում ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանի հետ	23.03.2015	ԼՂՀ ԿԳ նախարար, ՀՀ ՃՇՀԱՀ ռեկտոր, համալսարանականներ
18.	Գիտական սեմինար՝ նվիրված Թ. Կրպեյանի ծննդյան 50-ամյակին	23.03.2015	ԵՊՀ պատվիրակություն, ԱրՊՀ-ականներ
19.	«Հայոց ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն» թեմայով միջազգային գիտաժողով	11.04.2015	ՀԱԵ առաջնորդ, նախարարներ, պետական այրեր, համալսարանականներ
20.	Միջոցառում՝ նվիրված Հայոց	15.04.2015	համալսարանականներ

	ցեղասպանության 100-րդ տարելիցին		
21.	«Միասին փրկենք 100 կյանք» խորագրով ակցիա	27.04.2015	ԼՂՀ առողջապահության փոխնախարար, ԱԺԿ կանանց խորհրդի նախագահ, բժիշկներ, համալսարանականներ
22.	Հանդիպում Հ. Մորգենթաուի ծոռան՝ Պամելա Շտայների հետ	27.04.2015	համալսարանականներ
23.	Հաղթանակի դաս	8.05.2015	ԼՂՀ ՊԲ նախարար, ԼՂՀ ԿԳ նախարար, համալսարանականներ
24.	Մագիստրոսների դիպլոմների տրման հանդիսավոր արարողություն	26.06.2015	ԼՂՀ ԿԳ նախարար. համալսարանականներ
ԱՐՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ			
1.	ԱրՊՀ-ՃՇՀԱՀ համագործակցության պայմանագրի ստորագրում	14.09.2014	ՃՇՀԱՀ պատվիրակություն, ԱրՊՀ-ականներ
2.	«Գրական տապան» փառատոն	28.09.2014	Փառատոնի մասնակիցներ, համալսարանականներ
3.	«Արցախի երիտասարդության ձայնը»	22-26.09.2014	«Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ ղեկավար, համալսարանականներ
4.	Հանդիպում Կ. Մարտիրոսյանի հետ	1.10.2014	համալսարանականներ
5.	ԱրՊՀ-Լյովենի կաթոլիկ համալսարան համագործակցության պայմանագրի ստորագրում	13.10.2014	Լյովենի կաթոլիկ համալսարանի պատվիրակություն, ԱրՊՀ-ականներ
6.	Ընթերցումներ տնտ/իրավ ֆակուլտետի հիմնադրման 25-ամյակի շրջանակներում	25.10.2014	ՀՊՏՀ պատվիրակության անդամներ, ԱրՊՀ-ականներ
7.	Հանդիպում ԵՊՀ պատվիրակության հետ	31.10.2014	ԵՊՀ պատվիրակություն, ԱրՊՀ-ականներ
8.	Հանդիպում ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Ս. Բաբայանի հետ	14.11.2014	համալսարանականներ
9.	Հանդիպում ՀՀ ՊԿԱ տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի աշխատակիցների հետ	11-13.12.2014	համալսարանականներ
11.	Հանդիպում «Դ-Տելեկոմ» ընկերության գլխավոր տնօրեն Ռ. Յիրիկյանի հետ, պարզևատրում	13.12.2014	ԼՂՀ ԿԳ նախարար, համալսարանականներ
12.	Հանդիպում ՀՀ ՊՆ խորհրդական Դ. Ջամալյանի և Եվրոպական ակադեմիայի հոգեբանության ամբիոնի վարիչ Կ. Նալչաջյանի հետ	22.12.2014	համալսարանականներ
13.	Հանդիպում ԼՂՀ արտադրական ենթակառուցվածքների նախարար Հ. Ղահրամանյանի հետ	3.03.2015	համալսարանականներ
14.	Հանդիպում ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանի հետ	12.03.2015	համալսարանականներ
15.	Հանդիպում ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչության պետ Ս. Շահվերդյանի հետ	17.03.2015	համալսարանականներ
16.	«Մուրեկտիվիզմի գերիսնդիրը. միջազգային դաշինքներ» թեմայով օնլայն դասախոսություն, Մոսկվա-Ստեփանակերտ	23.03.2015	համալսարանականներ
17.	Հանդիպում ՀՀ ԿՊԱ ռեկտոր Ռ. Մելիքյանի հետ	10.04.2015	համալսարանականներ
18.	Մ. Առստամյանի «Հայոց ցեղասպանության թեման գերմանական և ավստրիական գրականության մեջ»	15.04.2015	Հեղինակի հարազատներ, հյուրեր,

	գրքի հայերեն տարբերակի շնորհանդես		
19.	Հանդիպում նիդերլանդահայ հոգեբան Լ. Բադյասարյանի հետ	17.04.2015	համալսարանականներ
20.	Հանդիպում «Արտույտների ազարակը» գրքի հեղինակ Անտոնինա Արսլանի հետ	18.04.2015	ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչության պետ, Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր Շ. Մարշալ, համալսարանականներ
21.	Հանդիպում «Սինոփսիա Արմենիա» ընկերության տնօրեն Հ. Մուսայելյանի հետ, պարզևատրում	8.05.2015	«Յունիկոմպ» ընկերության նախագահ Արմեն Բալդրյանը
22.	Հանդիպում Գյումրիի ՏՏ կենտրոնի տնօրինության հետ	27.05.2015	համալսարանականներ
23.	Հանդիպում ՀՊՄՀ զարգացման և կիրառական հոգեբանության ա/վ Ս. Խուրդյանի հետ	31.05.2015	համալսարանականներ
ԱՐՊՀ ԵՂԲԱՅՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ			
1.	«Արցախի երիտասարդության ձայնը»	22-26.09.2014	«Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ ղեկավար, համալսարանականներ
2.	Հանդիպում Տարտուի համալսարանի պատվիրակության հետ	15.05.2015	Տարտուի համալսարանի պատվիրակության անդամներ, ԱրՊՀ-ականներ

ԿԱԴՐՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Կ.Լ. Միքայելյան

Բաժինը հաշվետու ժամանակաշրջանում նախագծել է 322 հրաման՝ աշխատանքի ընդունման, ազատման, տեղափոխման, աշխատանքային արձակուրդների, չվճարվող արձակուրդների, խրախուսման, պարգևատրման, տույժի, փորձուսուցման և այլնի մասին: Հրամաններից քաղվածքները բաժանվել են համապատասխան ֆակուլտետներին, ամբիոններին և ստորաբաժանումներին, դրանց բովանդակությանը ծանոթացրել համապատասխան անձանց:

Կնքվել են 285 աշխատանքային պայմանագիր:

Գրանցվել են 465 դիմում և ներկայացում:

Լրացվել են 235 տեղեկանք:

Գրանցվել և լրացվել են 185 անաշխատունակության թերթիկ:

Լրացվել են 55 գործուղման թերթիկ:

Ընդունվել են ժամավճարային հիմունքներով 131 աշխատողների և 10 հիմնական աշխատողների փաստաթղթեր : Բոլոր աշխատողների մասին տեղեկություններ ենք մտցրել opera լոկալ ցանց :

Ուսումնական տարին ավարտվելու և պայմանագրերի ժամկետները լրանալու հետ կապված աշխատանքից ազատվել են բոլոր ժամավճարային հիմունքներով և համատեղությամբ աշխատողները:

Իրենց դիմումների համաձայն աշխատանքից ազատվել են 13, պայմանագրի ժամկետը լրանալու հետ կապված 11, մահվան կապակցությամբ՝ 1 հոգի :

Նոր աշխատանքի ընդունվողներից պահանջել ենք համապատասխան փաստաթղթեր և ստեղծել անձնական գործեր:

Նոր հիմնական աշխատանքի ընդունվողներից պահանջվել են աշխատանքային գրքույկներ, կատարել գրառումներ: Գրառումներ ենք կատարել նաև տարակարգների փոփոխման, տեղափոխությունների, աշխատանքից ազատվողների :

Վիճակագրական վարչությանն է ներկայացվել ԲՈՒՀ-ի աշխատակազմի մասին տեղեկություն:

Առողջապահության նախարարությանն ենք ներկայացրել 58,68,78 և 88 թվականների ծնվածների մասին տեղեկություններ, պատվաստումների հետ կապված:

կազմվել են աշխատողների աշխատանքային արձակուրդների ժամանակացույցը և վերահսկել դրանց կատարումը:

Ամեն ամիս վարչակազմի և ուսումնաօժանդակ անձնակազմի համար կազմվել ենք հաշվետախտակ 140-145 հոգու համար: Կատարվել են աշխատանքային կարգապահության ընթացիկ հսկողություն:

Նոր ուսումնական տարում դասախոսական կազմի համար պատրաստել ենք հաստիքային ֆորմուլար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Քաժնի պետ՝ Սվետլանա Վլադիմիրի Հարությունյան

2014թ. Սեպտեմբերի 1-ից մինչև 2015թ. սեպտեմբերի 1-ը ԱրՊՀ ընդհանուր քաժնի փաստաթղթերի ընդունման և հաշվառման ցուցանիշները ներկայացվում են ստորև:

Ելից գրությունների մատյանում գրանցվել է 316 գրություն, որից փոստային առաքանու առաքման միջոցով հանրապետությունից դուրս առաքվել է 101, էլեկտրոնային տարբերակով՝ 15, ԱրՊՀ ցրիչի միջոցով՝ 200 գրություն:

Փոստային առաքանու միջոցով առաքվել է դեկանատների կողմից տրամադրված 250 ծանուցագիր:

Մտից գրությունների մատյանում գրանցվել է 391, ներկայացումների, զեկուցագրերի և միջնորդագրերի մատյանում 994 գրություն, դիմումների գրանցման մատյան 2840 դիմում ներկայացվել մակագրության և հանձնվել համապատասխան բաժիններ:

Ըստ արխիվում պահպանված տվյալների ԱրՊՀ համապատասխան բաժիններին է տրամադրվել տեղեկություններ շրջանավարտների ուսումնառության տարիների, ուսման առաջադիմության և աշխատած տարիների վերաբերյալ՝ 86 տեղեկանք, շրջանավարտների 134 միջնակարգ ատեստատ և անձնական գործեր:

ԱրՊՀ ստորաբաժանումներից արխիվի պահպանմանն է հանձնվել.

Ռեկտորատի նիստերի արձանագրությունների մատյանները սկսած 1998թ. մինչև 2015թ. օգոստոսի 31՝ 9 գիրք և 1 թղթապանակ

Դեկանատներից՝

630 շրջանավարտների անձնական գործ,

163 դասամատյան,

101 առկա և հեռակա բաժինների տեղեկագրեր

37 ստուգման գրքույք,

Մագիստրատուրայի և ասպրանտուրայի քաժնից՝

2014-2015 ուսումնական տարում շրջանավարտ մագիստրոսների թվով 310 անձնական գործ (որից 94-ը հեռացված մագիստրոսների անձնական գործ)

Ուսումնամեթոդական քաժնից՝

պետական քննությունների թվով 141 արձանագրությունների գիրք

Կադրերի քաժնից՝

25 անձնական գործ

ԱրՊՀ 2014-2015թ. ուսումնական տարվա ընդունելության ընդունող հանձնաժողովի կողմից.

արձանագրությունների մատյան,

առկա և հեռակա ուսուցման համակարգի դիմորդների գրանցման մատյան,

Ընդունելության քննությունների ձևաթղթեր:

ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Հարութ Մնացականյան

2014-2015 ուսումնական տարում ԱրՊՀ ուսանողական խորհուրդը կանոնակարգով սահմանված լիազորությունների շրջանակներում աշխատանքներ է կատարել ուսանողների ինքնակառավարումը կազմակերպելու, նրանց օրինական շահերը պաշտպանելու, ներհամալսարանական կյանքն ու առօրյա գործունեությունը բովանդակալից դարձնելու ուղղությամբ:

Գրանցվել են հաջողություններ, եղել են բացթողումներ:

1. Ուսանողների կրթական, գիտական, բարոյական, ստեղծագործական վերելքի և հասարակական ակտիվության խթանման համար իրականացված միջոցառումներ են՝

- ԱրՊՀ-ն համագործակցելով «Արցախի ժողովրդական դիվանագիտության ինստիտուտ» ՀՀ-ի և «Եվրոպական ինտեգրացիա» կազմակերպությունների հետ անցկացրեց «Երիտասարդության Ձայն» նախագիծը:

- 50 ուսանողի հանգստի կազմակերպում Ծաղկաձորում:

- Կազմակերպվել են մի շարք մշակութային, մարզական, գիտաճանաչողական միջոցառումներ նվիրված Մայր Բուռի 45 ամյակին՝

1. Ինտելեկտուալ խաղ:

2. Վոլեյբոլի միջֆակուլտետային մրցումներ:

3. Գիտաժողովի կազմակերպում:

- Ուսանողների ազատ ժամանցը բովանդակալից անցկացնելու նպատակով կազմակերպվել են մշակութային, ժամանցային միջոցառումներ, մարզական խաղեր, ինտելեկտուալ մրցույթներ և համերգային ծրագրեր: Ուսանողների միջազգային օրվան նվիրված համերգ, ուսման բարձր առաջադիմության, անձնական կարգապահության, ակտիվության, ներհամալսարանական ակտիվ գործնեության համար ուսանողների պարգևատրում

- Ուսանողների սոցիալական իրավիճակը բարելավելու նպատակով կազմակերպվել է՝

1. ուսանողներին հուզող հիմնախնդիրների ուսումնասիրում, վերլուծություն և համալսարանի ղեկավարությանը ներկայացում

2. հանրակացարանում բնակվող ուսանողների բնակկենցաղային պայմանների ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում

3. Կազմակերպվել է ԱրՊՀ ռեկտոր՝ Տիկին Մ. Մ. Մինասյանի, հանդիպումը առանձին ֆակուլտետների ուսանողների հետ:

Համագործակցություն ԵՊՀ-ի հետ՝

1. ԵՊՀ-ի ուսանողների հետ կազմակերպել համատեղ միջոցառումներ՝ Բերձորում ծառատունկ

2. Թ. Կրպեյանի 50 ամյակին նվիրված ընթերցումներ

3. Կազմակերպել ամառային միջոցառումներ՝ միջազգային ճամբարներ ԵՊՀ-ի, ԵՊՏՀ-ի, ԵՊԱՀ-ի ուսանողների հետ Բազե-2015 ճամբար

4. Հունգարացի մի շարք ուսանողների այցը ԱրՊՀ համալսարան իրենց դասախոսի հետ

ԲՈՒԺԿԵՏ

Վարիչ՝ Ռ. Պետրոսյան

2014-2015 ուսումնական տարում բուժկետ են հաճախել 3903 մարդ, որից 3039 աշխատող և 864 ուսանող:

Առաջին բուժօգնության համար դիմել են.

- Ստամոքսաղիքային տրակտի հիվանդությամբ – 54
- Արյան ճնշման չափման համար – 1385
- Մրսածություն – 291
- Սրտանոթային համակարգի հետ կապված – 421
- Գլխացավ – 489
- Ատամնացավ - 35
- Քթի արյունահոսություն – 4
- Տրավմա – 17
- Վիրակապ – 43
- Երիկամաքարային – 2
- Ալերգիա – 5
- Աչքի հիվանդությամբ – 2
- Ենթաստամոքսային գեղձի հիվանդությամբ - 1

- Վահանագեղձի հիվանդությամբ – 2
- Ուշագնացություն – 2
- Նկրոզ – 5

Հաճախակի դիմող խրոնիկ հիվանդներ՝

1. Սրտի վիրահատում – 7

2. Շաքարախտ – 5

3. Երիկամաքարային – 2

4. Հիպերտոնիա – 13

5. Աչքի հիվանդությամբ – 2

Ուղարկվել են կոնսուլտացիայի

- Թերապևտի – 53
- Կորդիոլոգի – 11
- Քիթ-կոկորդի – 2
- Ատամնաբույժի – 13
- Էնդոկրինոլոգի - 5
- Նեարդաբանի – 7
- Հեմոտոլոգի – 2
- Ինֆեկցիոնիստի – 6
- Ալերգոլոգի – 2

Բժշկի նշանակումով միջմկանային 30 սրսկում, ներերակային – 25

26.04.2015թ. անցկացվել է ակցիա <<Փրկենք 100 կյանք>>, որին մասնակցել են 199 ուսանող: